

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

**ՑՈՒՑԱԿ ԼԻՍԱԲՐՈՆԻ ԿԻԷԼՊԷՆԿԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ
ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ****

Բանալի բառեր՝ Կիւլպէնկեան հաւաքածու, յիշատակարան, Կոստանդնուպոլիս, Նոր Զուղա, Դրիմ, Խոշա Նազար, Յակոբ գրիչ, Գասպար գրիչ, Հայրապետ ծաղկող, Նիկողայոս:

ՄՈՒՏՔ

Լիսաբոնի Կիւլպէնկեան թանգարանի հիմնական ցուցադրութեան¹ մաս են կազմում չորս հայերէն պատկերազարդ ձեռագիր՝ մէկ Աստուածաշունչ (գոյքահամար՝ LA 152) եւ երեք Աւետարան (գոյքահամար՝ LA 193, LA 216, LA 253): Սոյն հաղորդմամբ առաջին անգամ ներկայացնում ենք այդ ձեռագրերի նկարագրութիւնը եւ յիշատակարաններն ամբողջութեամբ²: Հավելվածում ներկայացնում ենք Լիսաբոնի Ազգային Գրադարանում պահվող ևս մեկ հայերէն ձեռագրի (COD. 7970) նկարագրութիւն^{***}:

ՁԵՌԱԳՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ուսումնասիրման առարկայ հայերէն ձեռագրերը Կիւլպէնկեան հաւաքա-

* Լիսաբոնի ՆՈՎԱ համալսարան, ասպիրանտ, h.grigoryan@campus.fct.unl.pt: Հոդվածը ներկայացնելու օրը՝ օգոստոսի 3, 2022, գրախոսելու օրը՝ նոյեմբերի 2, 2022:

** Հրատարակման ուղղագրութիւնը միօրինակացրել եւ որոշ տարբեր Մատենադարանի ձեռագրերի Մայր ցուցակի սկզբումներին համապատասխանեցրել է «Բանբեր»ի խմբագրութիւնը:

1 Museu Calouste Gulbenkian, Coleção do Fundador, Galeria de Exposição Permanente, Arte do Oriente Islâmico e Arte Arménia.

2 Ձեռագրերն ուսումնասիրում ենք որպէս նիւթ դոկտորական թեզի, որը հիմնուած է միջառարկայական եղանակի կիրառման վրայ. այն է՝ համադրել հասարակական եւ բնական գիտութիւնները (այս եղանակը բաւական լայն կիրառում ունի յատկապէս արեւմտեան ձեռագրերի ուսումնասիրման ոլորտում): Այս դէպքում ձեռագրագիտական եւ պատկերագրական նկարագրութիւնը համարում է անալիտիկ էմպիրի կիրառմամբ, որն ուսումնասիրում է ձեռագրի առարկան՝ թուղթ կամ մագաղաթ, ներկեր եւ թանաքներ, կազմ: Այս համապարփակ մօտեցումը էական է առարկան ամբողջական տեսնելու եւ համապատասխան կոնտեքստում տեղակայելու համար, ինչը կարեւոր է հետագայ միջամտութիւնների ժամանակ, ինչպէս օրինակ արխիւային կամ թանգարանային պահպանումը, վերականգնումը եւ ցուցադրումը, յատկապէս այնպիսի խոցելի նմուշների դէպքում, ինչպիսիք ձեռագիր եւ պատկերագրող մատեաններն են:

*** Հոդվածի նկարները տե՛ս ներդիրում:

ծուի մաս են կազմել թերեւս նոյնանուն հիմնադրամ/թանգարանի ստեղծման օրուանից՝ հանգրուանելով Լիսաբոնում: Հարուստ գործարար եւ արուեստի նուրբ գիտակ Գալուստ Կիւլպէնկեանը (1869 թ., Սկիւտար, Կոստանդնուպոլիս – 1955 թ., Լիսաբոն) բացառիկ հմտութեամբ կարողանում էր համագործակցել հնավաճառների հետ եւ իր հաւաքածուի համար ձեռք բերել լաւագոյն նմուշները, որոնք էլ հետագայում թանգարանի հիմք դարձան³: Ձեռագրերը Կիւլպէնկեանը ձեռք է բերել իր կեանքի օրոք՝ Փարիզի, Լոնդոնի գրավաճառներից եւ Սոթբի աճուրդում⁴: Թէ ինչ ուղիներ են անցել վերջիններս նախքան վաճառքում յայտնուելը, յայտնի չէ: Յայտնի է միայն մատեանների կենսագրութեան այն հատուածը, որ պահպանուել է յիշատակարաններում:

Այս ձեռագրերն առաջին անգամ նկարագրել է Սիրարփի Տէր-Նէրսեսեանը, ում ժամանակին հրաւիրել են նորաբաց թանգարանի այդ նմուշները գնահատելու համար⁵: Վերջիններս թուագրուում են տասնեօթերորդ դարով եւ ներկայացնում են հայկական գրչավայրերի մի ուրոյն քարտէզ՝ Նոր Զուղա, Կոստանդնուպոլիս եւ Դրիմ: Այս բացառիկ նմուշները խօսու են ապացոյցն են ուշ միջնադարի հայ առեւտրային համայնքներում ծաղկող մշակութային կեանքի եւ գործուն հաղորդակցութեան: Ձեռագրերը մէկտեղում են բուն հայկական եւ այլ մշակոյթների ձեռագրարուեստի տարրեր: Մեր աշխատանքի ընթացքում փորձելու ենք գտնել աւանդականի եւ նորարութեան այդ սահմանը ինչպէս պատկերագրութեան, այնպէս էլ նիւթի առարկայական դրսեւորումներում:

Բացի բուն հաւաքածուում ցուցադրուելուց, Կիւլպէնկեան ձեռագրերն ընդգրկուել են նաեւ այլ ցուցահանդէսներում եւ գրաւել մասնագէտների ուշագրութիւնը (ստորեւ կդիտարկենք Աստուածաշունչ մատեանի օրինակը): Այս ձեռագրերը համառօտ յիշատակումների են արժանացել մի շարք ուսումնասիրութիւններում⁶, որոնցից թերեւս իր կարեւորութեամբ առանձնացնենք Սիրարփի Տէր-Ներսէսեանի արխիւային թղթապանակը (տե՛ս ծնթ. 5):

Աստուածաշունչը (LA 152) թերեւս ամենից շատ մասնագիտական ուշագրութեան արժանացածն է: Մի շարք ցուցահանդէսային պատկերագրքերում

³ **José de Azeredo Perdigão**, *Calouste Gulbenkian Coleccionador*, Lisboa, 1969, pp. 101-172.

⁴ Կիւլպէնկեան արխիւ, Լիսաբոն (FCG, Arquivos Gulbenkian), փաստաթուղթ N MCG 01470, MCG 02129, MCG 02085:

⁵ Կիւլպէնկեան արխիւ, Լիսաբոն (FCG, Arquivos Gulbenkian), փաստաթուղթ N MCG 04428, Սիրարփի Տէր-Ներսէսեանի դոսյէ, 1968:

⁶ **Angèle and Dickran Kouymjian**, “The Museum Calouste Built”, *Saudi Aramco World*, 9/10, 1974, pp. 6-11 (p. 7); **Sirarpie Der Nersessian**, *L’Art Arménien*, Paris, 1977, pp. 233-36; **Mikayel Arakelyan**, “Sixteenth and Seventeenth Century Armenian Illuminated Manuscripts from Galicia, Podillia and Bukovyna”, eds. **K. Bardakjian, F. Sysyn, A. Yasinovskiy** (Armenian-Ukrainian Historical Contacts. Papers of the International Conference Held in Lviv), Lviv, 2011, pp. 93-112 (p. 103).

վերջինիս անդրադարձել են Մարիա Քեյրոզ Ռիբեյրոն, Վրէժ Ներսէսեանը եւ Ժորժ Ռոզրիգեսը⁷: Էական աշխատանքներից է Սիլվի Մերեանի հանգամանալի անդրադարձը այս ձեռագրին եւ նրա յիշատակարանի մասնակի վերծանութիւնը⁸, որի հիման վրայ Ինա Բաղդիեանց ՄըքՔեյթը հետաքրքիր պատմական փաստեր է վերհանել⁹: Մենք մի յօդուածում¹⁰ ցոյց ենք տուել, որ պատկերագրական առումով LA 152-ը գալիս է համալրելու տասնեօթերորդ դարում ստեղծուած մի խումբ հայերէն Աստուածաշնչերի շարքը, որոնք առանձնանում են արեւմտեան ձեռագրերից ներշնչուած Արարչագործութեան պատկերմամբ¹¹:

LA 152-ը Կիւպէնկեան շորս ձեռագրերի խմբում ամենից ծաւալուն յիշատակարանն ունի: Վերջինից տեղեկանում ենք, որ այս մատեանը սրտի փափագով պատուիրել է ժամանակին Նոր Զուղայի թերեւս ամէնից յայտնի եւ հարուստ հայր՝ «իշխանաց իշխան եւ պարոնաց պարոն» Խոջա Նազարը: Նա չի զլացել եւ փնտրել է լաւագոյն վարպետների՝ գտնելով հմուտ գրիչ եւ հաւանաբար նաեւ ծաղկող Յակոբին Կոստանդնուպոլսում, ում եւ պատուիրել է կրկնօրինակել Աստուածաշունչը: Ինա Բաղդիեանց ՄըքՔեյթի ուսումնասիրութիւնները¹² մեզ թոյլ են տուել ծանօթանալ Նոր Զուղայի մեծահարուստ Խոջա Նազարի կեանքին վերաբերող բազմաթիւ մանրամասների, ինչպէս նաեւ ամբողջացնել հայ համայնքային կեանքի ընկերային-քաղաքական պատկերը Սեֆեան եւ Օսմանեան տիրապետութիւնների օրոք:

⁷ **Maria Queiroz Ribeiro**, *Only the Best: Masterpieces of the Calouste Gulbenkian Museum, Lisbon*, exhibition cat., eds. **K. Baetjer, J. D. Draper**, The Metropolitan Museum of Art, New York 1999, pp. 21-22, no. 4; **Vrej Nersessian**, *Treasures from the Ark: 1700 Years of Armenian Christian Art*, exhibition cat., The British Library, London 2001, pp. 188-89, no. 117; **Jorge Rodrigues**, *The Rise of Islamic Art, 1869-1939*, exhibition cat., ed. **J. Hallett**, Calouste Gulbenkian Foundation, Lisbon, 2019, pp. 117-18.

⁸ **Sylvie L. Merian**, “Armenian Scriptoria in Constantinople,” *Armenian Scriptoria in New Julfa*, *Armenia: Art, Religion, and Trade in the Middle Ages*, exhibition cat., ed. **H. C. Evans**, The Metropolitan Museum of Art, New York, 2018, pp. 235, 272, 238-40, no. 109.

⁹ **Ina Baghdiantz McCabe**, “An Armenian King in Exile: New Julfa’s Shah through a Persian Edict and an Armenian Bible,” *REArm* 27, 1998-2000, pp. 321-28; նոյնի՝ “The Armenian Bible of 1623 and the Merchant Communities of Constantinople and New Julfa,” *Armenian Constantinople*, eds. **S. Payaslian, R. G. Hovhannissian**, Costa Mesa 2010, pp. 183-199; նոյնի՝ “Connections Between Constantinople and New Julfa,” *Armenia: Art, Religion, and Trade in the Middle Ages*, exhibition cat., ed. **H. C. Evans**, The Metropolitan Museum of Art, New York, 2018, pp. 232-33.

¹⁰ **Hermine Grigoryan, Maria João Melo, Adelaide Miranda, Jorge Rodrigues**, “The Gulbenkian Bible (17th c.): an interdisciplinary study of a precious Armenian heritage”, *Art of the Armenian Diaspora*, ed. **W. Deluga** (Conferences and Studies of the Polish Institute of World Art Studies, Vol. 20), Warsaw-Toruń, 2020, pp. 59-75.

¹¹ Պատկերագրական այս առանձնախտկութիւնը ֆննել են նաեւ այլ հեղինակներ (տե՛ս ծան. 7, 8):

¹² **Ina Baghdiantz McCabe**, “Silk and Silver: The Trade and Organization of New Julfa at the End of the Seventeenth Century,” *REArm* 25, 1994-95, pp. 389-416; տե՛ս նաեւ ծան. 9:

Աստուածաշունչ մատեանի սկզբում ընդգրկուած է գրիչ, ծաղկող եւ տաղասաց Ստեփանոս Ձիք Ջուղայեցու յայտնի տաղը¹³: Այն բաւական երկարաշունչ է եւ նոյնպէս չափածոյով ներկայացնում է Հին եւ Նոր Կտակարանների գրքերի բովանդակութիւնը (ամբողջը՝ չորս հարիւր տող): Ձեռագրում առկայ են նաեւ Յակոբ գրչի բազմաթիւ մէկտողեայ յիշատակագրութիւններ: Գլխաւոր յիշատակարանը մատեանի վերջում է: Համառօտ փառատրական հատուածին յաջորդող ծաւալուն բնագիրը նախ ներկայացնում է սուրբգրային վկայակոչումներով յագեցած եւ տասներկու կէտերում ամփոփուած մի հատուած, որտեղ գրիչը մեզ է ներկայացնում սրբազան մատեան ստեղծելու եւ այն փափագելու դրդապատճառները: Ապա նա ներկայացնում է մատեանի հետ առնչուող անձանց, ժամանակի առաջնորդներին եւ իրադարձութիւնները: Կենտրոնական տեղ է յատկացուած ձեռագրի պատուիրատու/ստացողին եւ նրա ընտանիքի անդամներին՝ շարունակական յիշատակումներով եւ առատ գովեստներով: Այս յիշատակարանի բազմաշերտ կառուցուածքը եւ հարուստ բառապաշարը վկայում են գրչի բացառիկ տաղանդի եւ գրագիտութեան մասին: Թերեւս իզուր չէ հոշա նազարը նրան փնտրել Կոստանդնուպոլսում եւ սրտատրոփ ու համբերատար սպասել իր մատեանի աւարտին՝ Նոր Ջուղայում: Այս յիշատակարանը կարեւոր գրական յուշարձան է թէ՛ պատմական եւ թէ՛ գեղագիտական առումով: Այստեղ կսահմանափակուենք սոսկ վերջինիս ներկայացմամբ, քանզի այն արժանի է առաւել մանրամասն ուսումնասիրման եւ առանձին հրատարակման:

Բուն յիշատակարանին յաջորդում են տարբեր տարիների աւելացուած համառօտ յիշատակագրումներ այլ ձեռքերով, ինչը մատնանշում է Աստուածաշունչի հետագայ ստացողներին մինչ այն պահը, երբ նշումներն այլեւս դադարում են: Ստորեւ ներկայացնում ենք LA 152-ի բոլոր յիշատակարանները առանց կրճատման՝ հակառակ դրանց ծաւալուն եւ երկարաշունչ լինելուն:

Կիւպէնկեան յաջորդ ձեռագրերում պահպանուած յիշատակարանների

¹³ «Ոտանաւոր եւ շարադրական եւ յիշատակարան Աստուածաշունչ գրոց, արարեալ Ստեփանոս Էրեց՝ որդի Ստեփանոսի, ի խնորոյ պարոն Մելիք աղային, ի թվին ՌՉ. (1621) ամին»: Մի շարժ ձեռագրերում կրկնուող այս տաղի մասին աւելի մարմանս տե՛ս՝ **Ներսէս Ակիմեան, Տաղասացներ եւ տաղեր**, Վիեննա, 1968, էջ 153-173 (յատկապէս՝ 167), նույնի «Ստեփանոս Ձիք Ջուղայեցի. գրիչ, նկարիչ եւ տաղասաց քահանայ (1603-1637)», ՀԱ 2, 1947, էջ 112-124: Ակիմեանը հրատարակել է այս տաղը, նշելով, որ այն արտագրուել է քանիցս, եւ հետագայ կրկնօրինակողները յարմարեցրել են տաղի թուականը ըստ իրենց ձեռագրի, ուստի դժուար է սահմանել սկզբնագրի թուականը: Տաղի ամենավաղ թուագրուած օրինակը՝ ՌՉ. (1621), պահպանուել է Եղմ. 428 ձեռագրում. մէջբերում ենք. «Ի թուականիս մեր հայկազեան, որ է անցեալ քսան յոթելեան, այլ եօթնտասն աւել ի վան...» (տե՛ս՝ **Նորայր Եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց**, հ. Բ., Երուսաղէմ, 1967, էջ 386-87): Մեր դէպքում (LA 152) ունենք միեւնույն տաղը, որի վերնագրում արտագրուել է ՌՉ. (1621) թուականը, իսկ առաջին տողերում առկայ թուականը շնչուած հատուած ունի. մէջբերում ենք. «Ի թվականիս մեր հայկազեան, որ էր անցեալ քսան յոթելեան, այլ եւ քսան /// (շնչուած) աւել ի լրման...»: LA 152-ի գրութեան ՌՉԲ. (1623) տարին յայտնի է հիմնական յիշատակարանից:

պատկերը հետեւեալն է. LA 216-ն ունի համեմատաբար ծաւալուն յիշատակարան, LA 193-ը՝ համառօտ մի քանի տող, LA 253-ը՝ հետագայի յիշատակագրութիւն: Աւետարաններից իւրաքանչիւրը հայ ձեռագրարուեստի մի բացառիկ նմուշ է, ինչը հաւաստում է, որ Կիւլպէնկեանն իրօք հետամուտ է եղել գտնելու լաւագոյնը իր հաւաքածուի համար:

LA 216-ը Նոր Զուղայում ստեղծուած փոքրածաւալ մատեան է՝ յագեցած զարդանկարչութեամբ ու մանրանկարներով: Բազմավաստակ գրիչ Գասպարի եւ յայտնի ջուղայեցի ծաղկող Հայրապետի համատեղ աշխատանքն է սա՝ ամփոփուած նրբահիւս արծաթէ կրկնակազմի մէջ: Զեռագիրը թերթելիս մի ամբողջ ծաղկատօն է բացուում ընթերցողի առջեւ, քանի որ նրա իւրաքանչիւր լուսանցքում արթնանում է մի գունեղ ծաղիկ՝ բոլոր միւսներից տարբերուող:

LA 193-ի համառօտ յիշատակագրումից տեղեկանում ենք միայն գրիչ Նիկողայոսի մասին: Մեր համեմատական ուսումնասիրութիւնները ցոյց են տալիս, որ ձեռագիրը Ղրիմում ստեղծագործած յայտնի գրիչ եւ ծաղկող Նիկողայոս Մելանաւորի աշխատանքն է: Զեռագիրը բացառիկ է նրանով, որ ներկայացնում է Կիլիկեան յայտնի Ութ մանրանկարիչների աւետարանի (ՄՄ 7651) ճշգրիտ կրկնօրինակումը՝ յար եւ նման Նիկողայոսի միւս՝ արդեն յայտնի կրկնօրինակմանը (ՄՄ 6341):

LA 253-ը յիշատակարան չունի, այլ միայն՝ հետագայ մէկ յիշատակագրութիւն: Զեռագիրը թերեւս անաւարտ է. վերջին թերթում պահպանուել են թուչնակերպ գծանկարներ եւ անաւարտ մնացած բնագիր: Մատեանն ունի ընկած էջեր եւ որոշ հատուածներում թուլացած պրակներ: Ամէն դէպքում, պատկերագրական ոճից ելնելով, այն վերագրուել է տասնեօթերորդ դարի Կոստանդնուպոլսի դպրոցին¹⁴: Զենք բացառում նաեւ Նոր Զուղայի դպրոցի մասնակցութիւնը: Զեռագրիւն ուշագրաւ է պատկերագրական մի առանձնայատկութեամբ. աւետարանական պատկերների շարքից կարծես իրենց ոճով առանձնանում են չորս աւետարանիչների ամբողջ թերթ զբաղեցնող մանրանկարները, որոնք թւում են ճշգրտօրէն կրկնօրինակուած Կիլիկեան մի օրինակից (ՄՄ 2629) տպաւորութիւն ստեղծելով, թե պոկուել են աւելի վաղ ձեռագրից եւ տեղադրուել այստեղ¹⁵: Կարծում ենք՝ այս մատեանի կենսագրութիւնը պարզելը բաւական հետաքրքիր կլինի, ինչին եւ հետամուտ ենք ներկայումս:

Կիւլպէնկեան չորս ձեռագրերից իւրաքանչիւրն առանձնայատուկ է իւրովի, եւ արժէ նրանց անդրադառնալ անհատականօրէն: Այստեղ զերծ ենք մնում ձեռագրագիտական եւ պատկերագրական հանգամանալի նկարագրութիւնից՝

¹⁴ Այս դիտարկումն արել է Սիրարփի Տէր-Ներսէսեանը իր ձեռագիր նշումներում:

¹⁵ Աւետարանիչների պատկերների՝ Կիլիկեան ոճ յիշեցնող այս առանձնայատկութիւնը եւս հանդիպում ենք Սիրարփի Տէր-Ներսէսեանի դիտարկումներում:

նպատակ ունենալով ներկայացնել այն մեր հետագայ աշխատանքում¹⁶:

Ստորեւ ներկայացնում ենք ձեռագրերի համառօտ նկարագրութիւնները, ապա՝ բուն յիշատակարանները՝ բերուած ամբողջութեամբ, եւ գրիչների կամ հետագայ ստացողների բոլոր համառօտ յիշատակագրութիւնները¹⁷:

1

(Գոյհանամար՝ LA 152)

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՌՉԲ. – 1623

ԳՐԻՉ՝ Յակոբ, Ստեփանո՞ս: ԾԱՂԿՈՂ՝ Յակոբ: ՍՏԱՅՈՂ՝ Խոջա Նագար:

ԹԵՐԹ՝ 606+ 6 (հետագայի էջակալում՝ 1-1212, որ է՝ 1բ-606ա)¹⁸. չգրուած՝ 1ա, 1212բ, 7բ, 11բ, 12ա, 1035բ: ՊՐԱԿ՝ 1×4+ Ա-ԼԹ×12 (Ժէ 13, ԻԼ՝ 11 + 1×7 + Ա-Բ12 + Գ 11 + Դ-Ձ (38) + Է-Թ 12 (Ը 13) + ԽԹ 12+ Ծ 11: ՆԻԻԹ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 22.4×16.5: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 47: ԿԱԶՄ՝ գրոշմագարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ կապոյտ կտաւ, լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ ԱԲ + Գ-Ձ, դեղնաւուն մագաղաթ, չգրուած:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ Արարչագործութիւն՝ 13բ, Մարկոս՝ 981բ: Կիսախորան՝ 14ա, 662ա, 950ա, 982ա, 1002ա, 1036ա: Նկար բնագրի մէկ սիւնակում՝ պատմողական հինկտակարանային՝ 137բ, 167բ, 241բ, 477բ, 487բ, Նայի մարգարէ՝ 736ա, Երեմիա մարգարէ՝ 819բ, Դանիէլ մարգարէ՝ 877բ, Եզեկիէլ

¹⁶ Մեր խորին երախտիքն ենք յայտնում այն բոլոր հաստատութիւններին, որոնք աջակցում են այս հետազոտութեան իրականացմանը՝ Մետրոպ Մաշտոցի անուան Մատենադարան, Կիւլպէնկեան թանգարան եւ արխիւ՝ Museu Calouste Gulbenkian, Arquivos Gulbenkian, Lisboa, Կիւլպէնկեան հիմնադրամ՝ Fundação Calouste Gulbenkian, Լիսաբոնի ՆՈՎԱ Համալսարան՝ FCT-NOVA (NOVA School of Science and Technology), DCR (Departamento de Conservação e Restauro), LAQV-REQUIMTE (Laboratório Associado para a Química Verde-Rede de Química e Tecnologia), IEM (Instituto de Estudos Medievais, FCSH-NOVA), Պորտուգալիայի գիտական հիմնադրամ՝ FCT (Fundação para a Ciência e a Tecnologia, դոկտորական դրամաշնորհ՝ PD/BD/142866/2018):

¹⁷ Մեր նկարագրութիւններին են 1-4 կարգային համարները, որոնց փակագծուած յաջորդում են թանգարանի գոյհանամարները: Յիշատակարանները բերել ենք բնագրային ուղղագրութեամբ. միայն ըստ ներկայիս կանոնների նշանակել ենք կէտադրութիւնը եւ մեծատառերը, բացել ենք համառօտագրութիւնները, ուղղանկիւն փակագրերում՝ [] վերականգնել ենք ընկած տառերը, սխալագրութիւններն ընդգծել ենք ուղիղ գրերով: Բնագրում առկայ ցանկացած այլ յաւելում նշուած է կոր փակագծերում: Թողնելով ապագային, այստեղ առայժմ ձեռագրերի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ մասը չենք նկարագրել:

¹⁸ Սիրարփի Տեր-Ներսէսեանը նշում է 609 թերթի մասին, սակայն մեր հաշումներում 606 թերթ է՝ համապատասխան 1212 էջի:

մարգարէ՝ 897բ, Ղուկաս աւետարանիչ (Գործք Առաքելոց)՝ 1065բ, Յակոբոս առաքեալ՝ 1095բ, Պետրոս առաքեալ՝ 1099բ, Յովհաննէս աւետարանիչ (Յայտնութիւն)՝ 1113բ, Պօղոս առաքեալ՝ 1139բ: Լուսանցանկարներ՝ մարգարէներ՝ 778ա, 784ա, 789բ, 793բ, 795բ, 796ա, 797բ, 799բ, 802ա, 804ա, 811բ, տերունական՝ 951բ, 952ա, 1003բ, 1048ա: Լուսանցագարդ՝ բուսական, թռչնային, տաճար: Զարդագիր՝ թռչնագիր, ձկնագիր, հանգուցագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, մանուշակագոյն, դարչնագոյն, մոխրագոյն, օսկի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի Ա. փեղկին ընկած 3 գամերի անցքեր, Բ. փեղկին՝ 3-ական ընկած գամերի հետքեր եւ կիսով ընկած կապիչներ, առաջին պրակի ստորին հատուածը փոքր-ինչ թուլացած, որոշ ներկեր թափուած՝ 14ա, 296ա, 623բ, 877բ, 1002ա, 1113բ, գրադաշտը վնասուած՝ 352ա, 992ա, անցք մագաղաթին՝ 158ա-159բ, թերթի վերին կտրուած անկիւն՝ 800ա-801բ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՆԱԽԱԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

1բ Ոտանաւոր եւ շարադրական եւ յիշատակարան Աստուածաշունչ գրոց, արարեալ Ստեփանոս էրէց՝ որդի Ստեփանոսի, ի խնդրոյ պարոն Մելիք աղային, ի թվին ՌՀ. (1621) ամին¹⁹:

2ա Ի թվականիս մեր հայկազեան,
Որ էր անցեալ քսան յոբելեան,
Այլեւ քսան /// (շնչուած) աւելի
լըման,
Գրէցաւ շունչս աստուածական:
Ստ առաքելոց սրբոց կոչման,
Որք հաւաքեալ ի մի եդան,
Ըզձին եւ Նորըս կտակարան,
Ձոր աստ շարեմ յարմարական:
Յառաջ ըսկիզբն Բրիսէթեայն,
Գործք վեցարեա արարչութեան,
Ի կիրակէ աւր տէրունեան,
Մինչ ի շաբաթն աւր
հանգըստեան:
Արար ըզմարդն յաւր կազմութեան

եւ եդ ի դրախտըն փափկութեան,
նտուր պատէր անմահական՝
Չուտել պտղոյն մահացական:
Սոքա յանցան զպատիրանն,
Զլուսոյ ծածկոյթըն մերկացան,
ելեալ դրախտէն յադինական,
Անկան յերկիրս այս տրտմական:
Յետոյ ցաւօք հեծեծեական
Ծընան երկաւք անասնական,
Հուսկինն հարիւրերեսնամեան,
Դարձան ի հող յորմէ ստեղծան:
Ծընունդք նոցա իսկ բազմացան,
Լըցին զերկիրս այս մահական,
Պէսպէս մեղաւք աղտեղացան,
Մինչ յԱստուածայ աշացն ելան:

¹⁹ Այս տաղը հանդիպում է մի շարք ձեռագրերում (տե՛ս ծան. 13): Այստեղ այն հաւանաբար նախագաղափար օրինակից է վերցուած, թեւ չենք բացառում նաեւ նույն Ձիք Ստեփանոսի մասնակցութիւնը այս ձեռագրի ստեղծման որեւէ փուլում, քանի որ նրա անունը յիշատակուում է նաեւ բուն յիշատակարանի վերջին տողում: Թեւ այդ վերջին յիշատակումը կարող է նաեւ Յակոբ գրիչի գնահատանքի դրսեւորումը լինել՝ Ստեփանոսի տաղը կրկնօրինակած լինելու համար:

Իսկ արարիչ Տէրն անսահման
 Նա բարկացաւ որդոց մարդկան,
 Զըրհեղեղեաւ կորըստական
 Եբարձ գհասակ ամէն մարդկան:
 Իսկ աշխարհի սերմ մարդկութեան
 Պահեաց ըզՆոյ իւր ծնընդեամբն,
 Որդիս երրորդ նմա ծնան,
 Յորոց բնաւին աշխարհս լըցան:
 Յետոյ նոցունց ազգ բազմացան,
 Զազիր մեղօք շաղախեցան,
 Մինչ Աբրահամըն պատուական՝
 Զոգով սիրող աստուածութեան:
 Ապա Աստուած Տէր գթական
 Իջաւ ի տունն աբրահամեան,
 Եկեր ըզզորթն իգիական
 Եվ զբաղարճն անապական:
 Ետ եւ զորդին պարգեւական՝
 ԸզԻսահակ ծաղր խնդութեան,
 Յորմէ սիրեալ ազգն անմահութեան,
 Յեղն Յակոբա իսրաէլեան:
 Որդիք նորին երկոտասան,
 Ծնան ի յերկրին Քաղդէական,
 Ռոբէն, Շմաուն, Ղեի, Յուդայն,
 Եվ Զաբոդոն ընդ Սաբարայն:
 Գաղն, Եփթաղիմ, Ասեւ եւ Դան,
 Բենիամին ընդ Յովսեփեան,
 Սոքա ոգիք եաւթանասուն,
 Մտին յերկիրն Եգիպտական:
 Մնացին կենօք խաղաղական,
 Մինչ որ Յովսեփ էաւ վաղճան,
 Յետոյ նոցունց շարչարեցան՝
 Որպէս գերի անզղջական:
 Այս է ծնունդ գիր նախնական,
 Զոր գրբեաց Մովսէս անտեսական՝
 Խրատով հոգոյն աստուածական,
 Ուսեալ բնաւին ըզհանգամայն:
 Իսկ գիրք Ելիցն ազատութեան,
 Հրէից ազգին ծառայութեան,
 Նախամեծ արքան զամենայն,
 Յաղագս հրաշիցն որ գործեցան:

Ապա ըզկնի գիրք Ղեւտական,
 Վասն իրաւանցըն քաւչական,
 Ողջակիզացըն մատուցման,
 Զոր աստ յիշէ յոյժ զանագան:
 Եւ ապա գիրք Թըվոցն որ կան,
 Յեղապետիցն երկոտասան
 Եւ այլ հրաշքն ըսքանչական,
 Աստ կայ գրեալ հիացական:
 Կրկին օրէնք մովսէսական
 Է հինգերորդ ըստ խորհրդեան,
 Զանցեալ պատուէրքն աստուածական,
 Աստ երկրորդի ըսպառնական:
 Ապա Յեսու որդի Նաւեան,
 Զոր յաջորդէ յետ Մովսէսեան,
 Զազգըն հրէից ընդ Յորդանան
 Անցոյց ոտիւք անթացական:
 Իսկ Դատաւորքն երկոտասան,
 Որ յետ Յեսու յաթոռ նստան,
 Նախ Գողոնէլ յաղթող հսկայն,
 Մինչ ի Սամիսուն քաջ ախոյեան:
 Իսկ Մալաքիմն Խորայելեան,
 Ըսկիզբն ըզծնունդ Սամուելեան,
 Ի մէջ սոցա Դաւթի աւծման,
 Մինչ մեռանի Սաւուղ կիսեան:
 Ապա Դաւիթ որդի Յեսսեան
 Նստի յաթոռ արքայութեան,
 Սա սիրեցեալ աջ բաւական
 Եւ յուսադրող անյոյս մարդկան:
 Իսկ Սողոմոն խաղաղութեան
 Նստի յաթոռ իւր հայրական,
 Որպէս եւ Տէր մեր յաւիտեան,
 Թագաւորէ տանն Յակոբեան:
 Այլեւ Զորորդ արքայութեան,
 Յեղիայէ պատմէ մեզ բան,
 Մինչ ի գերիլ տանն Յուդայեան,
 Ի յԱսորիս, ի Պարսկաստան:
 Դարձեալ պատմէ գիրք Մընացական
 Ի յԱդամայ մինչ Սուլիման,
 Երկրորդն անտի մինչ Յովսիայն,
 Զոր Նեբաւով արքայն եսպան:

Այլեւ եզրաս գիրք սրբական
 Պատմէ զգերիլ տանն Յուդայեան,
 Այլեւ զգարձ նոյն գերութեան,
 Որ եղեւ յետ եաւթտասնամեան:
 Նոյնպէս Երկրորդ գիրքն Եզրական,
 Զոր եւ կրկնէ յառաջ նոյն բան,
 Երրորդ Եզրասն աղօթական
 Խնդիրք պէս պէս եւ զանազան:
 Գիրք Երախտեացն Նէեմեան,
 Որ ած պարիսպ րուշէլիմեան¹,
 Իսթերն | Յբ | յազգէ Յետուա Նաւեան,
 Զնշող ազգին Ամաղեկայ:
 Յուրիտ տոհմէ Շմաւոնեան,
 Որ զասորոց հօրն Եսպան,
 Տովբիթ յազգէ Նեփթաղիմեան,
 Առնող յուսով ողորմութեան:
 Իսկ եւ Յուդա Մակաբայեան,
 Նորին եղբայր մեծն Յովնաթան,
 Եղիազար, Շմաւոն, Յոհան,
 Որդիք գոլով Մատաթիայն:
 Սոքա ընտիր ազգ պատուական,
 Վրէժինդիրք նախանձական,
 Վասն օրինացն աստուածական,
 Ի յայլ ազգաց առին վաղճան:
 Այլեւ կրկին Մակաբայեան,
 Զոր երկրորդէ յառաջնոյն բան,
 Իսկ յերկրորդում Մակաբայեան
 Պատմէ յաղագս մեծ
 զաւրութեան:
 Աստանօր ժամ է պատմութեան,
 Յաղագս Յորա մեծ ճգնութեան,
 Սա Աղամայ տիպ եւ նման,
 Այլեւ հայի Աստուածըն բան:
 Իսկ եւ սաղմոս քնար Դարթեան,
 Եկեղեցոյ երգ հոգեկան,
 Ծերոց պարիսպ եւ ամուր վահան,

Տղայոց ուսումն իմաստութեան:
 Դարձեալ Առակ խրատ մանկական,
 Եւ Ժողովողն մէջ հասական,
 Իմաստութիւն ծերոց զըկուան,
 Զի մի՛ գլորին սայթաքական:
 Իսկ Երգ երգոցն անհասական,
 Գեր քան զմիտս եւ քան ըզբան,
 Յաղագս անախտ փեսայութեան
 Եւ անարատ կոյս հարսնութեան:
 Այժմ ըսկըսցուք զբանն Յայեան,
 Կայծիւ մաքրեալ ծնունդն
 Ամովսեան,
 Զկոյսն եւ զորդին իւր միական,
 Ծանուցանող դէմ յանդիման:
 Դարձեալ տեսողքն երկոտասան,
 Որք խաւեցան կենացն ըզբան,
 Նախ Ովսէ է այր պատուական,
 Որ առ երկրորդ կին շընութեան:
 Ապա Ամովս հովիւ վարձկան,
 Որ թութ քաղէր նորոյս նըշան,
 Իսկ Միքիա պատմող ծնընդեան
 Ի Բեթղեմեմ տուն Եփրաթեան:
 Յովել տեսող սուրբ գալստեան
 Ի վերնատունն հոգոյն իջման,
 Իսկ Աբդիու տվեալ նշան
 Հեթանոսաց նորոգութեան:
 Պատկեր Փրկչին քարոզն Յունան,
 Ելող կեստն տիպ յարութեան,
 Ապա Նաւում եղկեսական,
 Որ Նիմուէի սպառնայր
 յանցման:
 Իսկ Ամբակում տե|4ա|սող Փրկչին
 Բարձեալ ի խաչ դէմ յանդիման,
 Սոփոնիաս սաստիկ գուժկանն
 Ժպիր հրէից ժողովրդեան:
 Եւ Անգէաս յետ գերութեան

¹ Նեեմ. Բ. 17 «Եկայք եւ շինեցուք զպարիսպս Երուսաղեմի»:

Ասէք տանտէրն նորոգութեան,
 Տեսող խաչին եաւթնաշահեան
 Մեծ մարգարէ Զաւարիայն:
 Հրեշտակատիպ Մաղափայն
 Ծնանի յերկրին Քաղզէական,
 Այլեւ ի տիս նա մանկութեան
 Ի Բաբելոն առնու վաղճան:
 Յորովայնէ կոյս մաքրական
 Սրբեալ հոգովն Երեմիայն,
 Որ զխորհուրդ Տեառն գալըստեան
 Մեզ քարոզեր յայտ յանդիման:
 Իսկ Դանիէլ մաքուր ծերն այն,
 Որ Սուրբ Հոգոյն էր բնակարան,
 Սա արքայից բաբելական
 Մեկնող զերազըն հրաշական:
 Տեսող կառաց շորեքկերպեան
 Եզեկիէլ որդի Բուզեան,
 Որ զգամաքեալ ոսկերք մարդկան
 Տեսեալ ի տիպ մեր յարութեան:
 Այսոքիկ թիւք խորհրդական,
 Եւ մարգարէք աստուածաբան,
 Սոքա վկայք մարդեղութեան
 Եւ Բանին Հաւր անճառ
 ծնընդեան:
 Երեք մանկունքըն պատական,
 Որք ի հնոցին ոչ այրեցան՝
 Անանիա, Ազարիայն
 Եւ Միսայել մաքուր տղայն:
 Որք ըզհրամանն արքունական
 Անարգեցին դէմ յանդիման
 Զպատկեր Բելա վիթխարական,
 Իբր ըզմեռեալ շուն մի վարկան:
 Այլ մատուցին զերգս արհնութեան
 Երից անձանցն եւ մի բնութեան՝
 Հաւր եւ Որդոյ եւ Սուրբ Հոգոյն,
 Պատարագեալ ողջակիզեան:
 Իսկ արեգակն արդարութեան,
 Էմանուէլ բանն հայրական,
 Ի Սուրբ Կուսէն անապական

Ծնաւ մարմնով անճառական:
 Յետ երեսուն ամի ծնընդեան
 Մկրտեցաւ ի Յորդանան,
 Վկայելով ձայնն հայրական՝
 Դայ է Որդի իմ միակամ:
 Ապա ի լեառն ել փորձութեան,
 Յաղթեաց չարին խաբէութեան,
 Յետոյ ընտրեաց երկոտասան
 Առաքելոց դասք սրբազան:
 Արար նըշանըս հրաշական,
 Բժըշկութիւնըս զանազան,
 Սաստեաց դիւայն հալածական,
 Ըզկաղս արար գնացական:
 Կուրեաց շնորհեաց լոյս տեսական,
 Սրբեաց զբորոտսըն ուրկական,
 Բանիւ նորին խուլքըն լուան,
 Համերք պէսպէս լեզուս
 ստացան:
 Յարոյց զըմեռեալ բնութիւնս
 մարդկան,
 Որպէս զՂազար չարեքարեան,
 Եւ ըզգլորեալ ազգս Ադամեան
 Կանգնեաց ի կեանս
 անմահական:
 Իսկ ախտաժէտք առողջացան,
 Զրի պարգեւաց արժանացան,
 Եւ մեղաւորք արդարացան,
 Յորդեգրութիւն Հօրն ընկալան:
 Սաստեաց ալեացըն կոհական,
 Ըզծովն արար հանդարտական,
 Իբր ի վէր տանեաց ձեղուան,
 Գնայր ոտիւք անթացական:
 Ի լեառն ելեալ Թաքօրական,
 Ընդ իւր Պետրոս, Յակոբ, Յոհան,
 Սոքա կարծեալ սիւնքն երեքեան,
 Բարբառոյ Հօրն արժանացան:
 Տեսին զփառս աստուածութեան,
 ԶՅիսուս պայծառ արփոյ նման,
 Ուստի յահեն զարհուրեցան,

Իբր մեռեալ յերկիր անկան:
 Այլ եւ զՄովսէս եւ զԵղիայն
 Տեսին փառօք դէմ յանդիման
 Ի մեծ լուսոյ արեգական,
 Ընդ մերձենալն նուագեցան:
 Այսուիկ սոքա զնոսա ծանեան,
 Եկեալ վկայք աստուածութեան,
 Մովսէս՝ դիմօք անպարական,
 Եւ Եղիա՝ թաւարծական:
 Ընդ որ Պետրոս՝ զարհուրական,
 Խօսէր բանիւ ոչ գիտական,
 Ըզտաղաւարսն խորհրդական
 Ասէր շինել յարմարական:
 Ապա եկեալ ի շարչարան,
 Յաղթեաց մահու իշխանութեան,
 Այլեւ մարմնով անապական
 Խոնարհեցաւ ի գերեզման:
 Այլեւ հոգով նա բանական,
 Աստուածութեամբն անշատական,
 Իջեալ ի դժոխն ըստերական,
 Զբանտեալսն արար
 ազատական:
 Երեքարեա յետ սուրբ թաղման
 Յարեաւ փառօք անհասական,
 Երեւեցաւ խնկաբերիցն,
 Յետոյ գնդին սուրբ մետասան:
 Քառասնօրեա յետ յարութեան
 Վեր համբարձաւ անճառ կայանն,
 Յետոյ գայցէ ի դատաստան՝
 Առնուլ համար գործոց
 մարդկան:
 Իսկ առաքեալքն յետ համբարձման
 Ըզխոստացեալ հոգին զգեցան,
 Լեզուս հրեղէնս բարբառեցան,
 Զոր տայր հոգին թելադրական:
 Ապա գրեցին զաւետարան,
 Շնորհօք Հոգոյն որպէս տուան,
 Զի աւժանդակ քարոզութեան
 Ընդ ինքեանս առցեն

նպաստական:
 Նախ Մատթէոս՝ տիպ մարդկութեան,
 Ապա Մարկոս՝ առիւծնման,
 Դուկաս՝ բլբլիկ ցուլն հերկական,
 Յետոյ արժւի մաքուրն՝ Յոհան:
 Այլեւ գետոցն աղենական,
 Գանգէս՝ քատակ Մատթէոսեան,
 |5բ| Զեհոն Մարկոս ըստ
 զօրութեան,
 Դիկլաթ՝ Դուկաս վաստակ
 կրական:
 Եփրաթ՝ ուրոյն կոյսն Յոհաննէս,
 Երթայ անխառն յԱսորեստան,
 Ապա խառնի Տիգրիս ի նմա՝
 Մտեալ ի ծովն Պարսկական:
 Որպէս եւ նա առանձնական
 Երթայ մինչեւ ի շարչարան,
 Ապա անտէն իսկ միանան,
 Խառնին ի ծովն աստուածական:
 Դարձեալ խորհուրդն մին՝
 Նման ընդ շորս մասանցըն
 մարմնական,
 Խոհեմութիւն Մատթէոսեան,
 Արիութիւնըն Մարկոսեան:
 Իսկ ողջախոհըն յարութեան,
 Որ է Դուկասն հելլեական,
 Յոհաննէս՝ տիպ արդարութեան,
 Է գերագոյն քան զամենեան:
 Ապա ընթեռ սմին եզան
 Առաքելոց պրակն որ կան,
 Յետոյ զտեսիլըն պատմական՝
 Որպէս ետես մաքուրն Յոհան:
 Յետոյ զննջումն իւր Հանգրստեան՝
 Էր ընդ եղբարսն աղաւթական,
 Իսկ յետ շորից աւուրց թաղման
 Փոխի ի կեանս անմահական:
 Ապա գիրք սուրբ շորեքտասան
 Առաքելոյն սուրբ Պողոսեան,
 Նախ Հրոզվմայ Դաղմատական

Գրրէ օրէնք մնացական:
 Իսկ Երկրորդ թուղթ Կորնթական
 Գրրէ պատուէր հաստատական,
 Գաղատացոց նոր պատուիրան
 Գրէ հակիրճ պատկանական:
 Եփեսացոցն Ասիական
 Գրրէ խրատ յարմարական,
 Փիլիպեցոցըն բարութեան
 Գրրէ պատուէր ուրախական:
 Կողոսացոցն հաստատութեան
 Չանսալ հրէիցրն խտրութեան,
 Թեսաղոնիկ Մակեդոնեան
 Երկրորդ գրէ թուխթ ըղձական:
 Չորս եւ պսակ ուրախութեան
 Իւր անուանէ ըսփոփական,
 Չի աներեկ աւրն յարութեան,
 Մատուցանէ Երրորդութեան:
 Եւ յետ սոցա Եբրայեցոց
 Գրէ օրինացըն փոփոխման,
 Յետ այտորիկ Տիմոթէան
 Կրկին գրէ թուխթ զգոյշութեան:
 Իսկ Տիտոսի ընդելական
 Գրէ պատուէր նա քօշական
 Փիլիմոնի խառայական,
 Գրէ նմին ազատութեան:
 Կաթուղիկէքն եւթանեքեան,
 Չոր գրեցին ընդհանրական,
 Նախ Յակովբոսըն Յովսեփեան,
 Եղբայր Տէրն համշիրական:
 Ապա Պետրոս վէմն անսասան
 Երկրորդ գրրէ թուխթ խրատական,
 Իսկ | Ճա| Չեբեթէս որդին Յոհան
 Գրրէ երրորդ մեզ պատուիրան:
 Ապա Յուդա, որ Յակոբեան,
 Գրէ խրատ նա եզական,
 Չի յայրմանէ գեհենական,
 Չերծեալ ապրիմք յօրն
 անվաղձան:
 Դարձեալ է գիրք աստուածաբան,

Եկեղեցոյ ամուր վահան,
 Որպէս գրէ դամասկացին,
 Սուրբ վարդապետն Անանիայն:
 Գիրք Յակոբա, որք կարգեցան
 Թաղէսիւն կանոնական,
 Առաքելոց կրկին կանոնքն
 Գիրք անմարմնոց Դիոնիսեան:
 Եւ Պետրոսի քարոզութեան
 Եկեղեցոյ սրբոյ հիման,
 Որ է եղեալ Դաղմատական
 Յաթոռն սուրբ Լատինական:
 Այսքան գրոց փափաքեցաւ
 Խօշա Նազարըն պատուական
 Եւ ետ գրել իւրն յիշատակ
 Անշընջելի մինչ յաւիտեան:
 Եւ իւր որդոցըն բաղձական՝
 Սարֆրազ բէկին յոյժ ըղձական,
 Էլիագին եւ Հայկագին՝
 Բողբոջ բուսեալք վայելչական:
 Եւ ծնողացն իւրոց որ կան,
 Ի յանդրանկաց հոգոց կայան,
 Եղբարց իւրոց եւ քվերաց
 Եւ ընդանեացըն հանրական:
 Չոր Տէր Աստուած մեր յաւիտեան
 Պահէ անփորձ եւ անսասան,
 Եւ յետ աստեացս արքայութեան
 Ամենեքեան լինին արժան:
 Իսկ ես՝ նուաստ անձն անարժան,
 Չիք Ստեփանոս մեղաց աման,
 Չարեաւք լրցեալ, բարեաց ունայն,
 Եւ սրիկայս քան զամենայն:
 Այսքան գրոց աստուածական,
 Չոր շարեցի անբանական,
 Չձեզ աղաչեմ՝ որք հանդիպիք,
 Չմեղադրել իմ լրբութեան:
 Չի ես տկար եւ սխալական,
 Չեռնարկեցի յօժարական,
 Գրեցի կրկին սուրբ Կտակարան,
 Ոտամբ չափեալ ըստ Հոմերական:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

87բ Աւգնեա՛ Յիսո՛ւս միածին, եւ հա՛ն զիս յաւարտ:

137բ ԶՅակոբ գրիչ աղաչեմ յիշել ի Տէր:

295բ ԶՅակոբ գրիչ աղաչեմ յիշել ի Տէր:

462ա ԶՅակոբ գրիչս յիշէ՛ք ի սուրբ յաղաւթս ձեր:

942ա Աւարտի սա յԱւգոստոս ԻԳ. (23) աւրն:

1032ա Ապիկար զՅակոբ քարտողարս յիշեցէ՛ք ի մեղաց թողութիւն. ամէն:

1112ա Զմեղաւոր հողս Յակոբ, զհայրն իմ Պաղտասար եւ զմայրն իմ Յուստիանէ՛ յիշեցէ՛ք ի մեղաց թողութիւն: Եւ Աստուած զձերն թողցէ. ամէն:

1208ա Զմեղաւորս Յակոբ յիշեցէ՛ք ի Տէր ողորմեայի:

1208ա Փառք ամենասուրբ երրորդութեանն՝ Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Հասեալ իցես յատակս ծովու եւ զհետ ան:

1209բ Սովորութիւն է ատուածայնոց արանց միշտ եւ հանապազ խոկալ յաստուածային պատւիրանս՝ ի տուէ եւ ի գիշերի զվերինն խորհել, ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ: Եւ վասն բազում պատճառի, բազումք փափագին ջերմեռանդ սիրով եւ ըղձալի ցանկութեամբ արդիւնս եւ գործս կատարել: Նախ՝ վասն յուսոյ յաւիտենական եւ անմահ կենացն զանցաւորս արհամարհեն եւ զայն ստանան կեանս, որ մնացական է, որպէս ասէ Տէրն. Երթայք, գործեցէ՛ք մի՛ զկորստական կերակուրն, այլ զայն, որ մնա ի կեանսն յաւիտենական: Երկրորդ՝ զի մեք ապականացու եւ մահկանացու գոլով, ոչ նոյնպէս կամք մնամք, որպէս ասէ մարգարէն՝ Պանտուխտ եւ անցաւոր եմք, որպէս եւ ամէն հարքն մեր, ստանամք զգիրս զի անապական կենացն արժանի լիցուք շնորհօքն Քրիստոսի: Երրորդ՝ զի հրամայէ Տէրն. Գանձեցէ՛ք ձեզ գանձս յերկինս, որ ոչ ցեց եւ ուտիչ ապականեն, եւ ոչ գողք ական հատանեն եւ գողանան, գրեմք զգիրս, որ զամէն գանձս ի յինքն պարունակեալ ունի՝ նախ զվերին իմաստութիւն եւ ապա զստորինսն, որ գրեալ կան ի սմա: Չորրորդ՝ վասն պայծառութեան եւ նորոգութեան նորոյս Սիոնի, որով միշտ սովաւ լուսաւորի, որպէս ասէ Պօղոս առ Տիմոթէոս. Ի գալն քո զմատեանս բերջիր. ի յայս միտս գրեցան ամէն Հին եւ Նոր Կտակարանք: Հինգերորդ՝ վասն օգտութեան եւ բարեգարգութեան եւ իմաստութեան հանճարոյ եւ աստուածպաշտութեան մանկանց եկեղեցոյ, զի ամէն ուսումն եւ առաքինութիւն տեսական եւ գործնական աստուածային գրովք լինի, որպէս ասէ Պօղոս. Զգիրս սուրբս գիտես, որ կարող են զքեզ իմաստուն առնել: Վեցերորդ՝ վասն բարեխոսութեան միշտ եւ անդադար առ Աստուած, զկենդանի բանս աստուածային գրեմք եւ մարմնացն եմք ի քարտիսի, որպէս եւ բանն Աստուած մարմնացաւ եւ փրկեաց զմեզ ի մեղաց եւ մահու, եւ արժանացոյց անմահ կենացն, նոյնպէս եւ բանս գրեալ հաւատով եւ յուսով զամէն խնդրաւծս մեր կատարէ աստ եւ ի հանդերձեալն: Եւթներորդ՝ զի զպատմութիւն սրբոցն որք ի հը-

նումն եւ ի նորումս, զի համարձակութիւն ունին առաջի Աստուծոյ բարէխաւսել միշտ վասն անձանց մերոց այժմ եւ յաւուրն դատաստանի: Ութերորդ՝ վասն անջինջ յիշատակութեան առաջի Աստուծոյ, ոչ ունելով գերկրաւոր ինչ ի պէտս մեր, զսա ստացաք մեզ զաւակ եւ յիշատակ անմահ, ըստ մարգարէին. Երանի որ ունիցի զաւակ ի Սիրոն եւ ընդանեակ յերուսաղէմ: Իններորդ՝ վասն քաւութեան եւ թողութեան մեր մեղացն, բարեխօսութեամբ սրբոցն հնոցն եւ նորոցն, որպէս ասէ Տէրն. Արարէ՛ք պտուղ արժանի ապաշխարութեան, եւ մարգարէն ասէ. Զմեղս քո ողորմութեամբ քաւեսցես, եւ զանօրենութիւնս քո՝ տրօք տնանկաց: Տասներորդ՝ վասն պատելոյ զտօնս հին եւ նոր սրբոցն ստանամք զգիրս, զարդարեմք ոսկով եւ գոյնզգոյն երանկով, որպէս ասէ Տէրն. Զաղքատս յամէն ժամ ընդ ձեզ ունիք, այլ զիս ո՛չ: Մետասանորդ՝ վասն ներբողական գովասանութեան իւրաքանչիւր սրբոցն ստանամք զգիրքս, որպէս ասէ Սողոմոն. Ի գովութիւն արդարոց ուրախանան ժողովուրդք, եւ Դաւիթ ասէ. Յիշատակ յաւիտենից եղիցի արդարն, եւ Պօղոս ասէ. Ի պէտս սրբոցն հաղորդեցարուք: Երկոտասանորդ՝ վասն ի նախանձ եւ ի փափագ շարժելոյ զայլս՝ ճշմարիտ արդեանց եւ բարի գործոց, որպէս ասէ Պօղոս. նախանձաւոր լերուք շնորհացն, որ լաւն են: Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

Արդ, ի ժամանակին, յորում էր թՎական հայոց ՌԾԳ. (1604), եւ շահ Ապաս արքայն Պարսից յերկիրն Հայոց եւ էառ մեծաւ յաղթութեամբ զամէն ամուրս աշխարհին ի տաճկաց, եւ յետ ամի միոյ ել զօրավարն Տաճկաց ընդդէմ նորա, որում անուն էր Զղալօղլի, անհամար զօրօք, եւ նա խոյս տուեալ ի նմանէ, դարձաւ յետս, եւ ի դառնալն արար զՋուղայ տարագիր ի հայրենի բնակութենէն մերմէ եւ բերեալ բնակեցոյց զմեզ ի մայրաքաղաքն իլամացոց՝ ի Ասպահան, եւ ետ | 1210ա | մեզ գետին շինելոյ տուն՝ ի հարաւակողմ քաղաքին, ի վեր գետոյն Ուբաղայ, զոր պարսիկք Զընդառուր կոչեն, որ ասի՝ գետ կենդանի: Եւ շինեցաք անդ տուն բնակութեան՝ առաւել եւ գեղեցիկ քան զառաջինն, եւ անուանեցաք Նոր Զուղայ՝ ի վեր հնոյն կրկին եւ երեքկին գեղեցիկ: Եւ յետ ի Գ. ամի ես՝ Խօջայ Նազարս՝ որդի Խօջայ Խաչիկի, ցանկացա Աստուածաշունչ գրոց՝ ի սիփփանս եւ ի մխիթարութիւն ինձ, եւ լուա թէ ի Կոստանդնուպայլիս գտանի նօտար եւ քաջ քարտաւղար, եւ մեծաւ փափագանօք յուղարկեցի, որ գնացեալ ետուն գրել զցանկալի եւ զփափագելի գիրքս, որ կոչի Աստուածաշունչ, վասն զի ունի յինքեան պարունակեալ զըշին եւ զՆոր Կտակարանս Աստուծոյ շնչեալ, վասն այնորիկ կոչի Աստուածաշունչ՝ կոչեցեալ առաքելեցն սրբոց: Գրեցաւ Աստուածաշունչ տառս ձեռամբ Յակոբ դպրի, ի վայելումն իշխանաց իշխան եւ պարոնաց պարոն Խօջայ Նազարին եւ որդոցն իւրոց՝ պարոն Սարֆրազ բէկին, էլիագին, Հայկագին, զոր Տէր Յիսուս անփորձ եւ անսասան կենօք պահեսցէ մինչեւ ի խորին ձերբութիւնն. ամէն: Եւ էր ի գրչութիւն սորա ի թՎականին հայոց ՌՉԲ. (1623) ամին, բայց յորժամ բերաւ ի յԱսպահան, ի յաստուածապահ քաղաքն Զուղայ, էր թՎականն ՌՉԸ. (1629), ի յԱւագ Զատկին: Որ ի սոյն ամի մեռաւ շահ Ապաս

արքայն Պարսից, որ յոյժ սիրէր զըսաւայ Նազարն զամէն ժամանակս կենաց իւրոց, եւ զամէն զոր ինչ ասէր Խօջայ Նազարն, քաղցրութեամբ լսէր նմա թագաւորն, զով կամէր՝ մեծացուցանէր, եւ զով կամէր՝ ի փառաց եւ ի պատուոյ ընկենուր զնա թագաւորն: Եւ յաջորդեաց զկնի շահ Ապասիմ թոռն նորին շահ Սէֆի: Արդ, ի սոյն ամի նըստաւ յաթոռ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին տէր Մովսէս Տաթեւացին՝ այր սրբաարնունդ եւ խարազնագգեաց, կուսակրօն եւ ճգնասէր, արդիւնարար եւ գիտնական, վրէժխնդիր աստուածային օրինաց եւ անուանի վարդապետ, ռաբունապետ եւ տէլետին ամէն Հայոց, որ նորոգեաց զՍուրբ Էջմիածինն եւ այլ բազում եկեղեցիս, ըստ նըմանութեան Լուսաւորչին, ձեռնատրուութեամբ եւ օժանդակութեամբ Խօջա Նազարին, զեղծեալ եւ զապականեալ կարգ եւ զկրանս հայոց վերստին նորոգեաց եւ բազում որդիս ի փառս էած, որ են ճշմարիտ պատարագօղ Քրիստոսի, որպէս զինքն, որպէս ասէ սուրբ Աւետարանն. Յիսուս առնէր եւ ուսուցանէր, այսպէս եւ սուրբ վարդապետս մեր եւ հայր հոգեւոր ամէն հայոց Մովսէս անձանձիր առնէ եւ ուսուցանէ, վարդապետէ եւ քարոզէ, խրատէ եւ յանդիմանէ, եւ ինքն գործով կատարէ, ցուցեալ վարդապետութիւնս՝ զգործս ամբիծս եւ զվարս մաքուրս, որպէս եւ փայլէ յաւուրս մեր, որպէս զղամբարս լուսաւորս, զոր Տէր Յիսուս պահեսցէ իբրեւ զսին հաստատուն մինչ ի խորին ծերութիւնն՝ ի պարծանս հայկազան սեռի, եւ յետ աստեացս ընդ սուրբ հայրապետացն եւ ընդ մաքուր վարդապետացն դասակից եւ պակակից արասցէ. ամէն: Եւ ի դիտապետութիւն մերոյ քաղաքիս Զուղայոյ Խաչատուր կուսակրօն արհի եւ պանծալի եպիսկոպոս Կեսարացոյ, որ է աշակերտ սուրբ հայրապետին Մովսէսի, զարդարեալ ամէն առաքինութեամբ:

Արդ, բաղձանօք ցանկացաւ այսպիսի անկողոպտելի գանձիս եւ անթառամելի բուրաստանիս, անբակտելի ապարանիս եւ անմաշելի զարդիս, անշիջանել զամբարիս եւ անաղօտ լապտերիս, անգին մարգարտիս եւ անգիւտ գահարիս, անըսպառելի յետնորդիս եւ անջինջ յիշատակիս, որ ըստացաւ զԱստուածաշու[ն]չ տառս պարոնաց պարոն՝ պատուեալ եւ մեծարեալ ի թագաւորաց ջուղայեցի Խաչայ Նազարն՝ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնօղաց իւրոց՝ հօրն իւրոյ աստուածասէր եւ մեծահաւատ, ազատաց ազատ Խօջայ Խաչիկին, եւ մօրն իւրոյ՝ խոնարհամիտ եւ հեզահոգի Մարիամին, յիշատակ սոցին արհնութեամբ եղիցի. ամէն:

Դարձեալ յիշեցէք զԽօջայ Նազարն եւ զեղբարքն իւր՝ զպարոնաց պարոն Խօջայ Սաֆարն, զՍիմանն, զԶվանի եւ զԲաղումն, եւ բըւերքն իւր՝ զԵգտիխասն, Ագատն եւ զըսայրային, Տէր Աստուած ողորմեսցի սոցա ըստ մեծի ողորմութեան իւրում. ամէն. եղիցի:

Դարձեալ յիշեցէք զԽօջայ Նազարն |1211թ| եւ զկողակիցքն իւր՝ զԽաթուջանն եւ զՄարիամն, եւ զորդիքն իւր՝ զպարոն Սարֆրագն, Էլիագն, Հայկագն եւ հանգուցեալ ի Քրիստոս Վաթանն, եւ այլ հանգուցեալ որդոցն եւ դստերացն Քրիստոս Աստուած ողորմեսցի. ամէն:

Դարձեալ յիշեցէ՛ք զհօջայ Նազարն եւ զմեծ պապն իւր՝ զՄելքոնն, եւ զհանիկն իւր՝ զՇահիխասն, եւ զհօրեղբարքն իւր՝ զհօջայ Բաբայն եւ զՎարթանն եւ զԵաղուբն, Տէր Աստուած զսոսա արքայութեան արժանի արասցէ. ամէն:

Դարձեալ աղաչեմ յիշել ի սուրբ յաղալթս ձեր զպայազատ եւ զմեծաշուք, զպատուեալն իշխանութեամբ եւ ճոխութեամբ զհաւջայ Նազարն, որ ըստացաւ զԱստուածաշունչս ի հալալ վաստակոց իւրոց, ի սփոփանս անձին իւրոյ եւ ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ եւ ի յուսումն մանկանց նոր Սիրոնի, որոյ վարձատրեսցէ Քրիստոս Աստուած միոյն հարիւրապատիկ, հազարապատիկ, բիւրապատիկ, աստ եւ ի հանդերձելումն, եւ երկնից արքայութեանն արժանի արասցէ, հանդերձ ամէն ննջեցելովքն իւրովք, եւ զըՍտեփանոս գծողս ընդ նմին. ամէն. եղիցի:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

1211բ Թվին ՌՃԲ. (1653) Մելքումն ծնաւ՝ Սուրբ Սարգիսն անցած Դ. շաբաթ օր:

Թվին ՌՃԳ. (1654) Էլիագն ծնաւ՝ Սուրբ Գրիգորի պահք ուրբաթ օր:

Թվին ՌՃԴ. (1655) Նազարն ծնաւ՝ Սուրբ Խաչին բարեկէնդան կիրակի օր, Գասպար:

Թվին ՌՃԶ. (1657) Մամէն ծնաւ յինանց միջնոցն, Թվին ՌՃԸ. (1659) Թամարն ծնաւ աղուհացից մէջինք օր:

Որոց որոտման օրն տօն վեռեց:

Յակոբ, Էգագն, Յոհան, Էլիագն, Մարիամ, Սափուռն վեռեց, որ ամէն տարի կատարեն:

1211բ (Այլ ձեռքով) Արդ, յերես անկեալ աղաչեմ հանդիպողացդ եւ պատահողացդ, որք հանդիպիք ի սմա կարգալով կամ տեսանելով, յիշեսչիք ի մաքրափայլ յաղօթքս ձեր զհօնայ Նազարն եւ զկողակիցն իւր զԽաթուջանն, եւ զորդին իւր ըզհօջայ Հայգագն, եւ զսորին կողակիցն Նանաջանն եւ զՍափուռն, եւ զորքին¹ իւր զպարոն Մելքոնն, զպարոն Էլիագն, եւ զպարոն Նազարն, որ ի թուին ՌՃԻԳ. (1674) որ Դամայ ամսոյն ԺԳ. (13) եւ Հոկտեմբերի ամսոյն Գ. փոխեցաւ առ Քրիստոս, զոր եւ Տէր Աստուած իւր տեսոյն արժանի արասցէ: Եւ զուստերքն յիշեցէ՛ք ի Քրիստոս, Թամարն եւ Շէիխասն եւ Ուրուղլուն եւ Օղլանն եւ Մամէն եւ միւս Թամարն եւ Մասփիոն եւ զԼիխանն եւ Սամարուփն, եւ սոցին սպասաւոր Տատկումն, եւ ամէն արեան մերձաւորսն յիշեցէ՛ք եւ Աստուած ողորմի ասացէ՛ք. ամէն, Հայր մեր:

1211բ (Այլ՝ դժուարընթեռնելի նոտրգրով) Ի թուականին ՌՃԻԹ. (1680) Նախայ Լ. (30) Վարդավառ կիրակի օր ծնաւ Սաֆարն ի մօրէ, Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ:

¹ Սխալագրութիւն է. նիշարը՝ «գորդին»:

Թվին ՌՃԼԱ. (1682) Ղամար ԻԳ. օրն Ե. շաբաթ Նազարն ծնավ մօրէ:

Թվին ՌՃԼԳ. (1684) Նիրան ԺԵ. ումն ծնաւ Սաֆազն ի մօրէն:

1212ա Թվին ՌՃԽ. ումն (1691) Համիրայ մինումն Սուլթանումն ծնաւ ի մօրէ:

Փոքր Թվին ՁԵ. (1701) Արամ Գ. ումն Յոհանէսն ծնաւ ի մօրէ:

1212ա (1796 թ. այլ՝ խրթին, անփոյթ նոտրգրով*) Յորպէս Խօջա Նազարն ի թիվ թվականութեան 1072 (1723) Յացիցի գանձեցաւ սա գանձս ի պատուական ձեռամբն Յակոբոս դպրի ի Կոստանդնայաօլիս: Այսպէս կալով մնաց ի վայելումն նորին սերնդոց մինչեւ ի նոյն Թվին 1140 (1691), որում վայելեցին սերնդօք ի փր 68 ամս, յորպէս ցուցանէ ի վեր յիշատակագրութիւնք անուն Սուլթանումն: Այնուպէս զինչ լինիլն կամ գիրքս յումմէ առ ումէք փոխարկիլն մեզանէ անգիտելի, բայց ի յայսմանէ, որ ի Թվին փրկչին մերոյ Քրիստոսի 1775 քահանայ ոմն ի յազգէն Յայիոյ բնակօղ ի մայրաքաղաքն Թիփլիս գիտելով Անուանց օր իմոյ ի Անուն Սուլթանում, յամարելով ի միտս իւր, թէ նա իցէ մի ի սերնդոց Խօջա Նազարի, որ ոչ է այտպէս, քանզի շահ Աբաս արքայն Պարսից Խոջա Նազարին յանեալ ի գիօղաքաղաքէն Ջուղաու եւ նախնին յոր իմոյ յանիեալ ի Նախիջեվանոյ եւ տունն նախնու իմոյ ի Անուն Ազգաբանութեան Անուանի Շահամիրեանց: Կամ այլ որ ինչ մտածութիւնն, նորին սա գիրքս Թիփլիսու սիրով շնորհեաց մեզ ձեռամբն Յովսէփա Յարիւրապետին Վրաց՝ առ ի վայելումն մեր եւ որդոց որդոց մերոց, որում վկա է գրեցեալն նորին որ առ մեզ Ապրելի ամսի 18 յամի փրկչին 1774: Եւ մեք սիրով ընկալաք եւ ընդունեցինք ի վր շնորհաբաշխութիւնն ի նմանէ եւ խլեցաք նմայ ձեռամբն ասացեալ յարիւրապետի եւ ընթերցաք ի նմանէ շնորհակալութիւնն մեզնէ:

Եվ յորպէս սա գանձս է, յավատի պատվական եւ ցանկութիւնն սրտի իմոյ, զի կալով մնացէ առ ի վայելումն սերնդոց Շահամիրեանց, այսպէս այժմոյս ունին Յովսէփոս եւ Յակոբոս որդիք Նազարոսի, որդոյ Յակոբջանի, որդոյ Շհամրի, որդոյ Սուլթանումի, որդոյ Դաուրթխանի, որդոյ Շհամրի, որդոյ Մուրաջանի, որդոյ Շհամրի, մեծի Շհամրեանց սերնդէ եւ ի տանէն Նախիջեվանոյ, եւ ակն ունիմ ի Տեառնէ զի պահեսցէ. շնոհք եւ ողորմութիւն իւր ի վերս սերնդոց Շհամրեանց եւ ի վերս այս պատվական գանձիս, զի կալով անփութ մնացէ սա գանձս ի տան եւ ի բնակութեան Շհամրեանց ըստ արժանավորութեան պատվոյ իւրոյ մինչեւ ցրժամանակն կամաց Տեառն:

Վասն որոյ պատվիրեմ ձեզ սերնդոց Շհամրեանց, զի գիրքս ունիցիք ի տան եւ ի բնակութեան ձերում մաքուր տեղի, մի՛ վաճառեսցուք, մի՛ գրաւեսցուք եւ մի՛ փոխատուութեամբ տանէ ի դուրս տացուք վասն [ն]որոք սնոտի իրաց, քանզի ինձ յատկապէս թվեցաւ ծայրագուն պատճառ լինիլ ի սմա, քանզի միջոց ի փր 173 ամ ժամանակէն մելընաւ ձեռագրութեամբ անարատ մնացեալ մինչչեւ

* Յաջորդող ընթերցում-վերձանութիւնը Մաշտոցեան Մատենադարանի գիտաշխատող Քնար Յարութիւնեանի – Խմբ.:

ցըրայսօր, որ տեսչողաց երեվի իփր այսօր լինի գրեցեալ, ուրեմն ոչ է դժվարին յազարաւոր ամօք այսպէս անարատ մնալոց, եթէ մեք ոչ անկանիմք ի սխալանս մեղաց, որում ակն ունիմ ի Տեառնէ, զի մեզ եւս փրկեսցէ եւ զերծուցէ ի ամենայն սխալանացէ եւ այլրն:

[Գր]եցաւ Մադրասումն, ի ափս օվկիանոսի, ՅՕգոստոսի ամսի 1, Յամի Տեառն փրկչին մերոյ 1796

Ի սմայ յանդիպողաց խոնարհ եւ փոքրիկ սպասաւոր (անընկալելի ստորագրութիւն):

Գրութեան խրթութեան պատճառով մենք դժուարացանք ամբողջութեամբ եւ անթերի վերծանել այս վերջին յիշատակարանը: Վստահ ենք, որ ապագայում որեւէ հմուտ ձեռագրագէտ այն կվերծանի: Բնագիրը սահուն, բայց դժվարընթեռնելի նոտրգիր է (երեսուներկու տող), առկայ են արաբագիծ թուանշաններ: Տպաւորութիւն կայ, որ շատ բառեր համառօտագրուած են: Հետեւաբար, այստեղ ներկայացնում ենք բնագրի ընթերցումից քաղուած համառօտ ամփոփում, ինչը պատկերացում է տալիս ձեռագրի հետագայ ստացողների մասին:

ՆՇՈՒՄ՝ Կազմի Ա. փեղկի աստառին՝ «1589», Պհպ. Ա՜ն՝ մատիտով «L.A. 152», Զ՜ն՝ մատիտով «Ն170՞», Զբ՞ սեւ թանաքով «ղուլամ քե Տէր Աստուած», մատիտով «Bibliothèque CSG»:

2

(Գոյֆանամար՝ L.A. 193)

ԱԻԵՏԱՐԱՆ

ՂՐԻՄ

ժէ. դար (1647-1693)

ԳՐԻԶ, ԾԱՂԿՈՂ՝ նիկողայոս:

ԹԵՐԹ՝ 277+2 (հետագայի էջակալում՝ 1-554, որ է՝ 1ա-277բ). չգրուած՝ 1ա-3ա, 6բ-7ա, 10բ-11ա, 14բ-15ա, 18բ-19ա, 22բ-27ա, 175ա, 548բ-549ա, 551ա: ՊՐԱԿ՝ 1×13+Ա-ԻԳ×12 (Թ, ԻԳ 7, ԺԹ 10): ՆԻԻԹ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 17,6×13,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն: ԳԻԲ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 23: ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշի, Ա. եւ Բ. փեղկերին՝ արծաթէ կրկնակազմ, Ա. երեսին՝ 20 կոստղ, 2 գամ, կենտրոնում՝ հաւասարաթեւ խաչ՝ թեւերին 4 կոստղ, կենտրոնում կարմիր ակն, Բ. երեսին՝ 20 կոստղ, 2 գամ, 2 հիւսածոյ կապիչ, միջուկը՝ տախտակ, աստառը՝ փեղկերին կցուած պահպանակ մագաղաթ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ, մագաղաթ, չգրուած:

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ Մատթէոս՝ 28բ, Մարկոս՝ 176բ, Ղուկաս՝ 272բ, Յովհաննէս՝ 428բ: Խորան՝ 4բ-5ա, 8բ-9ա, 12բ-13ա, 16բ-17ա, 20բ-21ա: Կիսախորան՝ 29ա, 177ա, 273ա, 429ա: Բնագրում ընդգրկուած պատմողական-

դրուագային նկարներ՝ գրեթէ բոլոր թերթերին: Քրիստոսի ծննդաբանութիւն 78 շրջանակում՝ 292բ-295ա: Լուսանցազարդ-նկար՝ տերունական՝ 32բ-33ա, 34բ-35ա, 36բ, 39ա, 40բ-41ա, 61ա, 102բ, 126բ, 132բ, 134բ, 150բ, 152բ, 162բ-163ա, 166բ-167ա, 169ա, 172բ: Լուսանցազարդ՝ բուսական, խաչ՝ 533ա, թռչուն՝ 545ա: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր, մարդագիր, կենդանագիր: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, նարնջի, դարչնագոյն, մոխրագոյն, սպիւր:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մէջքի հատուածում մաշուած, Բ. փեղկի արծաթէ թիթեղի վերին աջ անկիւնը մաշուած, Բ. փեղկին ամրացուած երկու հիւսածոյ կիսով ընկած կապիչներ, մագաղաթը տեղ-տեղ գունափոխուած, մրի հետքեր՝ 264ա-265բ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

270բ ՈՏէր իմ Յիսուս Քրիստոս, յորժամ նստիս յաթոռ դատողական՝ հատուցանել մարդկան իւրաքանչիւր զգործս իւր, զոչ թողեալս ի դատաստան քո եւ զխլեալս յի|271ա|րաւանց քոց զնիկողայոս գրիչ, որ խրատեալս եմ վըճիռ տալով մեղաց իմոց բաւականասցի ի մարդասիրէդ, զի ընդունիցիմ զարքայութիւնդ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

553ա Յիշատակ է սուրբ Աւետարանիս արծաթ//[թն²] բօշա Սարգսին, կնոջն Սալչուկին, հօրն Մուրատին, մօրն Մարգարտին, որդոյն Սիմոնին, //ոհանին, եղբօրն Պետրոսին: Եթէ ոք յիշէ զսոսա միով Հայր մեղայիւ, յիշեալ լիցի առաջի Քրիստոսի. ամէն, Հայր:

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ 175ա, 271ա, 547ա, 548բ՝ մաշուած, անընթեռնելի, կապոյտ թանաքով բոլորակ:

ՆՇՈՒՄ՝ Կազմի Ա. փեղկի աստառին՝ մատիտով «193 M^o», 2բ՝ «LA. 193», 547ա՝ ջնջուած կապոյտ թանաքի հետքեր, 548բ՝ ջնջուած սեւ թանաքի հետքեր, 550բ՝ սեւ թանաքով, անվարժ «Գրքիգոր էժտայրենց մաչ² ի սուրբ Աւետայրայնը» գրրացը Օհանէս, Մարկոս, Մա[տ]թեոս, Ղուկաս ասոցե՞», 552բ՝ կարմիր թանաքով, մեծատառ՝ «ՈՂԱՆԷՍ», սեւ թանաքով, անվարժ «աւետարայնիչին բանին կգնաց՝ գրպին՝ այսպէս գրեաց ի քեզ բանին կեն//((թափուած)է քեզ բերաւ», 554բ՝ մատիտով «LA. 193», «ն140^o», «ach// Kehyaian»:

ԳՐՉԱՓՈՐՉ՝ 554բ՝ «եեեե»:

² Ջնջուած տառակապակցութիւն է. հագիւ նշմարելի՝ «բն», որ ձեւաւորուլ է «արծաթն» բառը եւ հաւանաբար առնչուլ է ձեռագրի արծաթէ թիթեղակազմերի վարպետի անուան հետ:

3

(Գոյֆահամար՝ LA 216)

ԱԻԵՏԱՐԱՆ

ԱՍՊԱՀԱՆ

ՌՃԼԵ. - 1686

ԳՐԻՉ՝ Գասպար: ԾԱՂԿՈՂ՝ Հայրապետ: ՍՏԱՅՈՂ՝ Եղսաբերթ:

ԹԵՐԹ՝ 266. չգրուած՝ 2բ-3ա, 4բ-5ա, 6բ-7ա, 8բ-9ա, 10բ-11ա, 139ա-141ա, 213ա, 264բ-265ա, 266աբ: ՊՐԱԿ՝ 1×10+ Ա-ԻԱ× 12(Ձ 14, ԺԱ 8)+ 1-6): ՆԻԻԹ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 10.8× 07.9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ Երկսին: ԳԻՐ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 25: ԿԱԶՄ՝ շագանակագոյն կաշի, արծաթէ նրբահիւս կրկնակագմով, դռնակով եւ 2 փականով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ դրոշմագարդ կտաւ, լուսանցակողերը՝ կարմիր: ՊԱՀՊԱՆԱԿ՝ հաւանաբար ընկած: 1ա էջին ամրացուած տպագիր թուղթ (սեւ եւ նարնջի գոյներով նկար՝ պատմանդանին կանգնած կին եւ սափոր, որի տակ տպագրուած է՝ «FR. KUPKA SC.», «EX LIBRIS LUCIEN DHUYS»:

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆ՝ Մատթէոս՝ 11բ, Մարկոս՝ 91բ, Դուկաս՝ 141բ, Յովհաննէս՝ 213բ, Քրիստոսի ծննդաբանութիւնը, 39 շրջանակում՝ 12բ-15բ, Յեսսէի ծառը՝ 16ա: Խորան՝ 1բ-2ա, 3բ-4ա, 5բ-6ա, 7բ-8ա, 9բ-10ա: Կիսախորան՝ 12ա, 92ա, 142ա, 214ա: Բնագրում ընդգրկուած պատմողական նկարներ՝ գրեթէ բոլոր թերթերին: Լուսանցագարդ՝ ծաղկային: Զարդագիր՝ մարդ, կենդանի, թռչնային: Գոյներ՝ կարմիր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, նարնջի, մանուշակագոյն, դարչնագոյն, մոխրագոյն, ոսկի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի փեղկերի որոշ գամեր կանաչ շերտով պատուած, դռնակի կաշին մաշուած, մագաղաթը տեղ-տեղ գունափոխուած, որոշ ներկեր թափուած՝ 1բ, 6ա, 8ա, 12բ, 19ա, թանաքը խունացած՝ 23ա, 56ա, անցք մագաղաթին՝ 257աբ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՁՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

91բ (նկարի տակ) Զմեղաւոր Հայրապետ նկարողն յիշեցէ՛ք, ով մանկունք սուրբ եկեղեցոյ:

141բ (նկարի տակ) ԶՀայրապետ ծաղկօղս յիշեցէ՛ք:

213բ (նկարի տակ) ԶՀայրապետ ծաղկօղս յիշեցէ՛ք:

211բ Զմեղապարտ անարժան գրչակս յիշեցէ՛ք:

262բ [Փ]առք անըսկիզբն անեղ անե՞զր իսկս///(չգրուած)ականին Հոգւոյդ քում էակցին, անճառ բղմանն հայրենի, մի բնութեանդ աստուածային մի տէրութեանդ եւ միշտ էին, կատարեալ երից անձինդ կատարողի արարածին, փառք պատիւ եւ զօրութիւն, եւ բարձրագոյն իշխանութիւն, յանցեալն յայժմուս

յապագային եւ անըսպառ յաւիտենին ի ամէն: [Ո]ր ետ կարողութիւն տկար մարմնոյս հասանել ի վերջ տառիս այս մարգարտաշար եւ վարդափթիթ բուրաստանիս, որ է սա ընդիր օրինակէ: Որ եւ գրեցաւ սա ի յերկիրս Ասպահան, ի յեզր Նարընդալային որ ասի Թորըսկան, ձեռամբ ոգնամեղ անարժան Գասպար իրիցի, որ եւ զանունս իմ եւ զգործս ոչ յիշեցէք ի յերկնաբացիք յաղօթս ձեր զեղկելի գրողս, զի բազում աշխատութեամբ գրեցի զսայ, Աստուծոյ զօրութեամբն ի յաւարտ հասի: Աղաչեմ ըզձեզ, ով մանկունք սուրբ եկեղեցւոյ, կարգացողք եւ լսողք, ամենքն մի բերան ողորմի ասացէք, զի եւ զձեզ լիցի ողորմութիւն ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ. ամէն: |263ա| Գրուեցաւ ի թուականիս մեր ՌՃԼՅ. (1686) եւ ի թագաւորութեան մերոյ շահ Սուլեմանին, եւ ի հայրապետութեանն տեառն Եղիազարու, որ այսմ ամի նըստաւ ի յաթոռ հայկազան սեռիս՝ ի Սուրբն Էջմիածին, որ եւ Աստուած եւ անսասան պահեսցէ ի յայլագգաց, եւ ի առաջնորդութեան տեառն Յոհաննու արհեստիսկոպոսի, որ եմք ի ներքոյ հարկի նոցա՝ ի վիշտ եւ ի նեղութիւն, ազատարարն Քրիստոս ազատեսցէ զամէն հաւատացեալ քրիստենեայսն յերեւելի եւ յաներեւոյթ թըշնամուոյն:

[Ո]ւտի եւ տեսել ըզսորա անճառ փրկագործութեան խորհուրդ, ոմն Եղապերթ անուն, զոր ի վաղուց հետէ ցանկայր աստուածախօս այսմ մարգարտաշար լուսափթիթ սուրբ Աւետարանիս, որ ըստացաւ բարի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղաց իւրոց, ի միտ առեալ զբանն Եսայեայ որ ասէ՝ Երանից, որ ունիցի զաւակ ի Սիոն եւ ընտանիք յերուսաղեմ. վասն այն յուսոյն ստացաւ զսուրբ Աւետարանս զարդարեալ եւ ոսկե|263բ|ղենօք ծաղկօք՝ յիշատակ իւրն եւ իւր ծնօղացն, յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք՝ <ա>: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Եղապերթն եւ կողակիցն Խօջայ Յովանէսն եւ հանգուցեալ որդիքն՝ Մանուկն, Յեառիմ եւ Մնացականն, յիշեցէք եւ Աստուած ողորմի: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս Եղապերթն եւ ըզգըստերքըն՝ Վարթախաթունըն, Բէկումն եւ հանգուցեալ դըստերքն՝ Խաթունն, Սիսիլէն, յիշեցէք. եւ միւսանգամ յիշեցէք ի Քրիստոս Եղապերթն եւ դուստրն Վարթախաթունն եւ սորա կողակիցն, որ է հանգուցեալ՝ Մուրախանն, եւ որդին՝ հանգուցեալ Սիմոնանն, եւ միւսն որդին՝ Յովասափն, զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն: Նաեւ զգըստերքն՝ Մարգարիտն եւ Յօղիդէն յիշեցէք, եւ կրկին անգամ յիշեցէք ի Քրիստոս Եղապերթն եւ միւս դուստր Բէկումն եւ կողակիցն՝ Գալուստն, եւ զդուստր Գուլջանն. զոր Տէր Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ. ամէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԽօջա Բաղդասարն եւ եղբայրն՝ Խօջայ Յովանէսն եւ որ|264ա|դիքն՝ զհանգուցեալ Սարգիսն, Յակոբջանն, Սահրատըն, եւ դըստերքն՝ Մինախաթունն, Խանմաղէն. յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԽօջայ Յովանէսն եւ զկողակիցն Եղապերթըն եւ սորա ծնօղքն՝ զՆիկողայոսն եւ զԽաթունըն յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք. ամէն:

265բ Ով հայրք եւ եղբայրք, աղաչեմ ըզձեզ՝ յորժամ հանդիպիք սմա կար-

դալով կամ օրինակելով սխալանաց եւ <եւ> խոշորանաց անմեղադիր լերո՛ւք, զի այս էր կար մեր: Յիշեցէ՛ք զմեղապարտ եւ անարժան փծուն գրչակս՝ Գասպար քահանայիս եւ զվարպետն իմ՝ Յովանէս դպիրն, որ է հանգուցեալ առ Քրիստոս, եւ մէկ բերան ողորմի ասացէ՛ք. Ամէն. Հայր մեր:

ՆՇՈՒՄ՝ 266ա՝ մատիտով «266 ff 110 miniatures», «22 / SKZZ»:

ԳՐԶԱՓՈՐԶ՝ 265բ՝ «մեղապարտ Գասպա», «հայր իձէ ուսանի», «մեղապարտ Գասպարս յիշեցէ՛ք», «Արժան է ստուգապէս եւ իրաւ ամէն որդ որ փութով միշտ երկրպագանելով փառաւորել զքեզ, Հայր ամենակալ, որ պատրաստեցեր զճշմարիտ հաստատուամ որերամակ մոնուն կարաոբո ճգնաւոր հայր հիթ թոր հ հշմութ մի», «գրչափորձ եւ ասաց որ մեղուք վառէ որ հաստատեց», «հունիոնոմուն կուն կ»:

4

(Գոյֆահամար՝ L.A. 253)

ԱՒԵՏԱՐԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՄ

ժէ. դա՞ր

ԹԵՐԹ՝ 280. չգրուած՝ 1աբ, 2բ-5ա, 6բ-7ա, 8բ, 9բ-10ա, 11բ-12ա, 13բ-14ա, 15ա, 16բ-17ա, 18բ-19ա, 20բ-21ա, 22բ-23ա, 24բ-25ա, 26բ-28ա, 94ա, 143ա, 278ա-280բ, կարծես ընկած են 8բ-9ա, 14բ-15ա, 17բ-18ա, 36բ-37ա, 38բ-39ա, 82բ-83ա-ի միջեւ եղած թերթերը, հաւանաբար հետագայում աւելացուել են թղթէ միջադիր-մեկուսիչ թերթեր. երկուական՝ 5բ-6ա-ի միջեւ եւ մէկական՝ 7բ-8ա, 8բ-9ա, 10բ-11ա, 12բ-13ա, 15բ-16ա, 25բ-26ա, 28բ-29ա, 94բ-95ա, 143բ-144ա, 219բ-220ա-ի միջեւ: ՊՐԱԿ՝ 3 (4+ 13+ 9)+ Ա.ԻԱ՝ 12 (Բ 8, Ը 10)+ ԻԲ 5+ 1 3: ՆԻԻԹ՝ մագաղաթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 15.4× 11.4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ երկսիւն: ԳԻԲ՝ բոլորգիր: ՏՈՂ՝ 23: ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմագարդ կաշի՝ դոնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ գունաւոր երիզանախշ կտաւ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ հաւանաբար ընկած:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒՅՈՒՆ՝ Մատթէոս՝ 28բ, Մարկոս՝ 94բ, Դուկաս՝ 143բ, Յովհաննէս՝ 219բ: Խորան՝ 18ա, 19բ-20ա, 21բ-22ա, 23բ-24ա, 25բ-26ա: Կիսախորան՝ 29ա, 95ա, 144ա, 220ա: Տերունական շարք՝ Աւետում՝ 5բ, Ծնունդ՝ 6ա, Ընծայում տաճարին՝ 7բ, Մկրտութիւն՝ 8ա, Դազարոսի յարութիւն՝ 9ա, Մուտք Երուսաղէմ՝ 10բ, Ոսնչուայ՝ 11ա, Մատնութիւն՝ 12բ, Խաչելութիւն՝ 13ա, Խաչից իջեցում՝ 14բ, Համբարձում՝ 15բ, Հոգեգալուստ՝ 16ա, Երկրորդ գալուստ՝ 17բ: Լուսանցազարդ-նկար՝ տերունական՝ 32բ, 90բ, 91բ, 138բ, 199ա, 214բ, 272ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչնային, տաճար՝ 76բ, 128բ, 205բ, 238բ: Զարդագիր՝ թռչնագիր, հանգուցագիր: Կարմրով գծանկարուած անաւարտ թռչնապատկերներ՝ 277բ: Կարմրով տողատուած, չգրուած՝ 278ա-279ա: Գոյներ՝ կար-

միր, կապոյտ, կանաչ, վարդագոյն, նարնջի, դեղին, մանուշակագոյն, դարչնագոյն, մոխրագոյն, սպիտակ, ոսկի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին մաշուած, փեղկերին՝ ընկած գամերի անցքեր, Բ. երեսի ստորին ձախ անկիւնում՝ մետաղէ թիթեղի մնացորդ, դռնակը կծկուած եւ դէպի ներս ծալուած, աստառը աղտոտուած, ստորին կարակապը կիսով քանդուած, առաջին եւ վերջին պրակները թուլացած, մագաղաթը գունափոխուած, թ. 1՝ ստորին եւ թ. 280՝ վերին անկիւնները պատռուած, որոշ ներկեր թափուած՝ 5բ, 11ա, 28բ, 151ա:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԿԱՅԻ

2ա Յիշատակ է Սուրբ Խաչա Օվանէսին եւ կողակից Նիգար Խաթունին, թվականին ՌՄԿԹ. (1820, թուականի մօտ նոյն սեւ թանաքով նկարուած է փոքրիկ, հաւասարաթեւ, բոլորակ խաչ):

ԿՆՔԱԳՐՈՇՄ՝ սեւ եւ ոսկեգոյն թանաքով ութանկիւն՝ 5բ, 143բ՝ աղաւաղուած, 28բ, 94բ, 219բ՝ նշմարուող կապգիր՝ «/// Մ /// Բ՞»:

ՆՇՈՒՄ՝ կազմի Ա. փեղկի աստառին, մատիտով «A 58», 1ա՝ «LA 253», «Armen ///vangel ///fl 15. jahr», 1բ՝ «Evangeliarium, Armenisches / XV Jahrhd», 2ա՝ «6», 223ա՝ «2»³, 224բ՝ «3», 227ա՝ «4», 230բ՝ «5», 233բ՝ «6», 238ա՝ «7», 241ա՝ «8», «Taf/// Pag.՞ 8.1-11.», «f///fl/// 7.63», 244բ՝ «9», 247բ՝ «10», 249բ՝ «11», 253ա՝ «12», 256բ՝ «13», 259ա՝ «14», 261ա՝ «15», 262բ՝ «16», 265ա՝ «17», 266բ՝ «18», 269բ՝ «19», 272բ՝ «20», 275ա՝ «21», 277ա՝ «Pag.՞. 8.1-11. ///», «Haf/// /// Pag.՞. 8. /// 1-11.», 280բ՝ կապոյտ թանաքով դրոշմուած տպատառ՝ «P. St.»:

ԳՐՉԱՓՈՒՉ՝ 1ա՝ կապոյտ մատիտով խզբզոց յիշեցնող տառեր:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ի յաւելումն ներկայացնում ենք համառօտ նկարագրութիւնը հայերէն եւս մէկ ձեռագրի, որ նոյնպէս գտնուած է Լիսաբոնում, սակայն մեր ուսումնասիրութեան մէջ չի ընդգրկուել: Մոյնով ամբողջանում է Պորտուգալիայում հանգրուանած հայերէն ձեռագրերի խումբը, որ ամփոփում է մինչ այս պահը յայտնի հինգ մատեան: Այս հինգերորդ ձեռագիրը Լիսաբոնի Ազգային Գրադարանում է (Biblioteca Nacional de Portugal) COD. 7970 համարի ներքոյ: Թե ինչպէս է այն յայտնուել այստեղ, յայտնի չէ: Ձեռագիրը մատչելի է մանրաժապաւէնի⁴ եւ թուայնացուած տարբերակով⁵, բուն ձեռագիրը սահմանափակ հասանելիու-

³ Մատիտով հետագայում արուած 2-21 այս համարները հանդիպում են Յովհաննէսի աւետարանի բնագում՝ հիմնականում պրակների ամրակարի մոտ:

⁴ Մաշտոցեան Մատենադարանի Այլ վայրերի ձեռագրերի մանրաժապաւէնների հաւաքածով մէջ այս ձեռագրի պատճենը կայ 1029 համարի ներքոյ:

⁵ <https://purl.pt/26150/1/index.html#/1/html> (1 նոյեմբերի 2022 թ.):

թիւն ունի: Մեր հնարաւորութեան սահմաններում ապագայում կփորձենք առաւել մանրամասն զննել այս ձեռագիրը, ինչպէս նաեւ պարզել նրա պատմութեանն առնչուող մանրամասները:

Ձեռագիրը Հաշուետումար է՝ գրուած հայ վաճառական Յովհաննէս Զուղայեցու ձեռքով: Այն ընդգրկում է Յովհաննէսի առեւտրային գործարքների գրանցումը 1682-1693 թվականների ընթացքում՝ բաւական լայն աշխարհագրութեամբ՝ տարածուելով նոր Զուղայից մինչեւ Հնդկաստան, Նեպալ եւ Տիբեթ: Անհերքելի է այս մատեանի պատմական արժէքը՝ որպէս տասնեօթերորդ դարի հայ վաճառականական իրականութիւնը փաստող բացառիկ աղբիւրի:

Հաշուետումարի հանգամանալի եւ լիակատար նկարագրութիւնը ժամանակին արել է վաստակաշատ գիտնական Լեւոն Խաչիկեանը՝ մատնանշելով տնտեսական նման վաւերագրերի ուսումնասիրման կարեւորութիւնը⁶: Խաչիկեանը ոչ միայն կարողացել է հմտօրէն վերծանել այս խրթին բնագիրը, այլեւ ամենայն մանրամասնութեամբ քննել է վերջինիս բովանդակութեան մաս կազմող բազմազան դրսեւորումները, ինչպէս օրինակ՝ Հաշուետումարում տեղ գտած չափերը եւ կշիռները, առեւտրային շրջանառութեան մէջ եղած ապրանքները, գները, արժութային միաւորները, Յովհաննէսի շրջագայած վայրերն ու համայնքները եւ այլ կարեւոր մանրամասներ: Նկատի ունենալով Խաչիկեանի վերոնշեալ ուսումնասիրութիւնները՝ սոյն աշխատանքում կսահմանափակվենք միայն ձեռագրի արտաքին նկարագրութեամբ⁷: Թեպետ չենք ժխտում, որ վերջինիս բովանդակութեանը եւ պատմական արժէքին կարելի է վերստին անդրադառնալ եւ նոր մանրամասներ բացայայտել:

Ձեռագիրը դասական մատեանի կազմութիւն չունի: Այն բաղկացած է իրար վրա դարսուած թերթերից՝ ամփոփուած թղթապանակ յիշեցնող կաշուէ պատեանի մէջ: Այսպիսի կազմութիւնը թերեւս յարմար է եղել հաշիւները միշտ ձեռքի տակ ունենալու եւ յաճախ լրացնելու համար: Թերթերը երկար են եւ ուղղահայեաց դիրքով: Խաչիկեանը նշում է 44 առանձին, իրար վրայ դարսուած թերթ, սակայն մեր հաշուումներում 93 թերթ է՝ երկու երեսին մանրատառ գրուած, իսկ վերին հատուածում դրանք ամրացուած են թւում: Թերթել են թերեւս վարից վեր եւ ոչ աջից ձախ, քանի որ բնագիրը թերթի Ա. երեսից շարունակուած է արդեն շրջուած Բ. երեսի վերին հատուածում, որ իրականում թերթի ստորին հատուածն է: Այս դիտարկումները վերջնական չեն եւ կարող են հիմնաւորուել միայն բուն ձեռագիրը տեսնելուց յետոյ: Բնագիրը գրուած է սեւ թանաքով, գծագրա-

⁶ Levon Khachikian, “The Ledger of the Merchant Hovhannes Joughayetsi”, *Journal of the Asiatic Society*, 4th Series, Vol. VIII, No. 3, Calcutta, 1966, pp. 153-187. **Լեւոն Խաչիկեան, Յակոբ Փափազեան, Յովհաննէս Տէր-Կաթեան Զուղայեցու Հաշուետումարը** (Տնտեսական պատմութեան վաւերագրեր Ա), խմբ.՝ Վ. Բայբուրդեան, Մատենադարան, Երեւան, 1984:

⁷ Այստեղ նկարագրել ենք ըստ մատչելի թուային տարբերակի՝ յուսալով, որ հետագայում կկարողանանք տեսնել բուն ձեռագիրը:

կան պատկերներ չկան, առկայ են միայն բաժանարար գծեր՝ գրանցուած հաշուարկները տարանջատելու համար: Քանի որ ձեռագիրը յիշատակարան՝ որպէս այդպիսին, չունի, մէջբերում ենք բնագրի վերծանուած այն հատուածը, որ յուշում է հեղինակին եւ օգնում թուագրել մատեանը: Այն աւարտում է 1693 թուականին արուած գրառումներով, երբ Յովհաննէսը Կալկաթա եւ մերձակայ Հուկլի քաղաքներում է, որտեղ եւ Հաշուետումարի գրանցումները դադարում են (Թերթեր՝ 39ա-38ա):

5

(Գոյֆահամար COD. 7970)

ՀԱՇՈՒԵՏՈՒՄԱՐ

ՆՈՐ ԶՈՒՂԱ

ՌՃԼԱ.-ՌՃԽԲ. - 1682-1693

ԳՐԻՉ Յովհաննէս, որդի Տէր Դաւթի:

Թեթ՞ 93 (հետագայի էջակալում՝ 92ա-1ա⁸, չգրուած՝ 77աբ, 72բ, 64աբ, 63աբ, 52բ, 38բ-37բ, 33բ, 24բ, 23բ, 22բ, 11բ, 6բ, 3բ, 1բ): ՆԻԻԹ թուղթ: ՄԵՇՈՒԹԻԻՆ՝ 18.0×54.0: ԳՐՈՒԹԻԻՆ՝ հիմնականում՝ երկսիւն, երբեմն՝ միասիւն: ԳԻՐ՝ մանր նոտրգիր: ԿԱԶՄ՝ դրոշմագարդ շագանակագոյն կաշի, միջուկը՝ տախտակ, աստառը՝ դեղնաւուն թուղթ, վերից՝ ծալուող դռնակ: ՊԱՀՊԱՆԱԿ՝ Ա+Բ, դեղնաւուն թուղթ, չգրուած:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. կազմի կաշին փոքր-ինչ մաշուած, թերթերի ծայրերի հատուածները մաշուած, թուղթը տեղ-տեղ քայքայուած, աստառը ցեցակեր: Որոշ հատուածներում նկատելի են թուղթը նախկինում ամրակայելու հետքեր:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

92ա Կաման ամենակալին Յիսուսի Քրիստոսի եւ առաջնորդութեամբ Հոգուն Սրբոյ, ես՝ տէր Դաւիթի որդի Յովանէսըս, Ըսպահան, Ջուղայ, թիվն ՌՃԼԱ., եւ փոքր թիվն Ազարի ԿԵ. (1682), Համիրայ ամսին ԻԲ.ումն (22) ընկերացայ, սարմաեայ յինք առի Գերաֆէ որդիքս՝ խոշայ Զաֆարիցն եւ պարոն Ըմպրում-աղիցն, ջամն երկու խերհուր եւ յիսուն թուման: Աստուծով տանեմ Յընդուստան, թուջարաթ առեմ. ինչ որ Աստուած շախ տայ, սարմաէն բաղայ, շախին երեք յըռասաթն պարոնացն լինի, չօթային իմ՝ Յովանէսիս լինի: Տէր Յիսուսն շարմ պախէ, ամէն:

ԿՆՔԱԳԻՈՇՄ՝ 92ա՝ սեւ թանաքով ձուածեւ, մէջը՝ թագ, ծաղկեշղթայ եւ մեծադիր լատինատառեր՝ «RPB», 91ա, 65ա, 36ա, 27ա՝ կարմիր թանաքով բոլորակ, մէջը՝ Պորտուգալիայի զինանշանը եւ լատինատառ՝ «BIBLIOTECA

8 էջահամարների այս հերթականութիւնը մեզ համար պարզ չէ: Առաջին թերթի համարը 92 է, իսկ վերջինը՝ 1, սակայն թերթերի ֆանակը 93 է. մէկ էջահամար՝ 51, կրկնում է երկու թերթում:

NACIONAL DE LISBOA»:

ՆՇՈՒՄ Կազմին ներսի կողմից ամրացուած թուղթ, վրան լատինատառ սպազիր՝ «LIVRO DE CONTAS de um comerciante arménio, chamado OHANES (João), filho de David. Começa no ano de 1682, em ISPAHAN (Irão) e estende-se por cerca de 6 anos. É o registo das suas transacções comerciais. Escrito em arménio vulgar».

HERMINE GRIGORYAN

CATALOGUE OF THE ARMENIAN MANUSCRIPTS
OF THE GULBENKIAN MUSEUM IN LISBON

Key words: Gulbenkian collection, colophon, Constantinople, New Julfa, Crimea, Khoja Nazar, scribe Hakob, scribe Gaspar, painter Hayrapet, Nikoghayos.

For the first time, this work presents a complete description and the colophons of four Armenian manuscripts kept in the Gulbenkian Museum of Lisbon. These illuminated manuscripts, a Bible (Inv. no: LA 152) and three Gospel Books (Inv. no: LA 193, LA 216, LA 253), are dated to the 17th century and represent an original map of the Armenian scriptoria of Early Modern period: New Julfa, Constantinople and Crimea.

The extensive colophon of LA 152 tells the story of the creation of this manuscript and provides information about individuals and events connected with it. The colophons of LA 193 and LA 216, albeit brief, mention the scribes, artists and some more details concerning these manuscripts. In LA 253, a single later note only indicates its subsequent owner. There is no main colophon in the manuscript.

This small but important collection preserved in Western Europe is studied for the first time by an interdisciplinary approach, including art-historical and material study, which will enable to develop appropriate conservation and restoration procedures for the preservation of this precious cultural heritage. The appendix gives a description of another Armenian manuscript (COD. 7970) preserved in Lisbon but not included in this study. Hopefully, in the future it will be possible to refer to it in more detail.

ЭРМИНЕ ГРИГОРЯН

**КАТАЛОГ АРМЯНСКИХ РУКОПИСЕЙ, ХРАНЯЩИХСЯ В
МУЗЕЕ ГЮЛЬБЕНКЯНА В ЛИССАБОНЕ**


Ключевые слова: Коллекция Гюльбенкяна, колофон, Константинополь, Новая Джульфа, Крым, Ходжа Назар, писец Акоп, писец Гаспар, художник Айрапет, Никогайос.

В статье впервые представлены все колофоны четырех армянских рукописей, хранящихся в Музее Гюльбенкяна в Лиссабоне. Эти иллюстрированные рукописи, Библия (Инв. но.: LA 152) и три Евангелия (Инв. но.: LA 193, LA 216, LA 253), датированы семнадцатым веком и представляют собой своеобразную карту армянских скрипториев Раннего Нового периода: Новая Джульфа, Константинополь и Крым.


Обширный колофон LA 152 раскрывает историю создания этой рукописи и дает подробные сведения о лицах и событиях, связанных с ней. LA 193 и LA 216, хотя и с краткими колофонами, позволяют узнать о писцах, миниатюристах и других деталях. LA 253 указывает его последующего владельца лишь в поздней записи, а основной колофон не сохранился.

Эта небольшая, но важная коллекция, сохранившаяся в Западной Европе, впервые изучается на стыке двух дисциплин – истории искусств и материального описания. Такой целостный подход поможет всесторонне представить рукописи и позволит разработать соответствующие протоколы консервации и реставрации для сохранения этого ценного культурного наследия. В приложении представлено описание еще одной армянской рукописи (COD. 7970), хранящейся в Лиссабоне, но не включенной в настоящее исследование. Мы надеемся, что в будущем можно будет обратиться к нему более подробно.


Ձեռագիր LA 152 – Աստվածաշունչ




թ. 1




թ. 2



թ. 6



թ. 1210



թ. 1211

[Թ] Վին, ա՛՛՛՛՛՛՛ ԺԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն ունի
 սարգի անն շա՛՛՛՛՛ ԿԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն
 [Թ] Վին, ա՛՛՛՛՛՛՛ ԺԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն ունի
 ԿԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛
 [Թ] Վին, ա՛՛՛՛՛՛՛ ԺԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն ունի
 ԿԻ՛՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛
 [Թ] Վին, ա՛՛՛՛՛՛՛ ԺԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն ունի
 ԿԻ՛՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛
 [Թ] Վին, ա՛՛՛՛՛՛՛ ԺԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն ունի
 ԿԻ՛՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛

թ. 1211

ԿԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն ունի սարգի անն շա՛՛՛՛՛
 ԿԻ՛՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛
 ԿԻ՛՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛
 ԿԻ՛՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛
 ԿԻ՛՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛
 ԿԻ՛՛՛՛՛՛՛՛ Ծննդն սարգի անն շա՛՛՛՛՛

թ. 1211

[Handwritten text in Armenian script, possibly a list or index with a large flourish at the bottom right.]
 ԿԻ՛՛՛՛՛՛՛ Ծննդն ունի սարգի անն շա՛՛՛՛՛

թ. 1212


Ա ՄԻՐԻՆ ԵՄԵ յՈՐԵՍԱՆ ԿԱՏՈՒԿԱՆ
 ԴԿՈՒՄ ՆԱՏՈՒՅԱՆԷՆ ԵՄԻՐՈՒԿԱՆ ԻՐԱԳՐԱՆԷՉԻՐ ՈՂՇԻՍ
 ԻՐԱՂՆԸ ԸՈՂԷՊԻՐ ԻՐԱՍՏԱՍՏԱՆԻՐՈՒ ԼԿՍԵՊՈՒԼԻՍ

թ. 270

ԲԱԿԱՆՅՐՈՅ ԶԵԿԻՉՍ ԳՐԻՉ՝ ՈՐԻՐԱՍՏԵԱՐԵԿԷՆԻՉԷՆ
 ՏՐՈՍՏԱՆԸ ԵՆԴՐԱՅԻՆՈՅ ԲԱԿԱՆԿԱՆԱՍՏԻ ԻՏՏԱՐ
 ԴԱՍԻՐԷԿՂԷ ԸՆԴՈՒՆ ԻՅԻՆ ՉԱՐԲԱՅՈՒԿԸ

թ. 271

Ձեռագիր LA 216 – Ավետարան



թ. 91բ



թ. 141բ

Դիր օրինակի: Որև
 գրեցաւ սախերի:
 րս առաջահանի ի
 յէպր նարրիդո
 լային որասիրտո
 լակամն ձեռամբ
 ոգնամեղ անարթն
 քասպար երիցի:
 որ եպանունս ին
 եպարծս ոչ յնէ:
 սեպ ի յերկնաքա
 սիք յաղօթածէր

թ. 262բ

Գրուեցաւ ի
 Թոսահանիս մեր
 ինչէն Եփեսոսէ
 մերոյ շահառուէ
 մանին և Եփէսոս
 լրապետութեն
 տն եղիազարտ
 որպէս մամի նրս
 տաւ ի յաթորո
 հայկազան սե
 րիս ի սբն եղմիս
 ծին որեւմ թևս
 սասանս պահեա

թ. 263ա

Ձեռագիր LA 253 – Ավետարան

Յիշատակէ սբ Իսաչս
 օչանէսին և Կողակեց
 Կնիգար Խաթուհին: •
 Մին և մ ԿԹ

թ. 2ա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընծաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցին և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակներ
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի..... 350

ԲԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էնա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘..... 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

Азат Бозоян	
Роль Антиохии в политике Левона Великого.....	5
Карен Матевосян	
Антикатоликос румского султаната Анания.....	22
Гагик Даниелян	
Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3).....	40
Элина Казарян	
Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков.....	60
Георгий Мирзабекян	
Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г.	74
Айказ Оганесян	
Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”.....	83

ФИЛОЛОГИЯ

Давид Геворгян	
Переводческое движение, начатое Григором II Вкаясером.....	93
Донара Карапетян	
Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”.....	113
Анна Оганджян	
Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины».....	131

ИСКУССТВО

Авет Аветисян	
Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах.....	166
Седа Манукян	
Образчик брнашенской школы миниатюры.....	199
Анна Аревшатян	
Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмяляна и Комитаса.....	212

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

Лусине Туманян

Гандзы и таги Ованеса Бргутенца 268

Асмик Киракосян

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши..... 295

Мигран Минасян

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах..... 321

Татевик Манукян, Кнарик Саргсян

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

Эрмине Григорян

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне..... 350

ДИСКУССИЯ

Нарине Варданян

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

Манеа Эрна Ширинян

XXIV всемирный конгресс византинистов..... 420

НЕКРОЛОГ

Назени Гарибян

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/